



CU58667180

892.9F51 W

Shahnamak Firdusi-i

# ՋԱՀՆԱՄԱԿ

ՓԵՐՏՈՒՄԻ Ի

ԴՐՈՒԱԳ

ԱՐՏԱՇԻՐ ԲԱԲԱԿԱՆ Ի

Թարգմանեց

Յ. ԹԻՐԵԱՔԵԱՆ

ՆԻԻ ԵՕՐԲ

1909


Արարս Տպագրական Ընկերութիւն

229 Իսդ, 28 ըդ Փողոց, Նիւ Եօրք.

892.9F51 W

**Columbia University**  
in the City of New York

LIBRARY



GIVEN BY  
M. H. Tiryakhan





# ԶԱՀՆԱՄԱԿ

ՓԱՔԳՈՒԹՄԻ Ի

ԴՐՈՒԱԳ

ԱՐՏԱՇԻՐ ԲԱԲԱԿԱՆ Ի



*Թարգմանեց*

**Յ. ԹԻՐԵԱՔԵԱՆ**

ՆԻԻ ԵՕՐԲ

1909

---

*Արաքս Տարագրական Հնկերոսիան*

229 Իսդ, 28 րդ Փողոց, Նիւ Եօրբ.

Firdausi  
"

gijg  
M. H. Terryakian  
4-2-22

892.9 F51  
W



---

In 2 m. 10 Apr. 1932





## ՀԱՅՈՑ

### ՔԵՐԹՈՂ-ԲԱՆԱՍՏԵՂԾ՝ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՀԱՅՐԻԿԻՆ

Երբ, ասկեց 13-14 տարիներ առաջ, նմանաձիշտ ձգնաժամներէ և տառապանքներէ յետոյ, Քեզ, ինչպէս կ'ըսէիր, «կը հասանէր ի Հայրապետական վեհոչքի՞ն բարձրանալ և ինձ ի Շահաստան Պարսից դեզերիչ», յայնժամ մի առանձինն ուղարկուեալք և նամակով կը յորդորէիր զիս ջանալ ի հայ յեղոյ Պարսիկ գրական հր-րաչափերուները:

Անցան Ժամանակներ, բայց ես ջանաստեցի յորդո-րիդ և հրանանիդ. բախտ ունեցայ Արտաշիր-Բաբականի Կարնամակս մատուցանել Քեզ իբր նախախայրիք և օրհ-նածիր քաջաչերական կոնդակդ ընդունիչ: Կը փափաքէի որ Պարսից քանաստեղծական վեհակոչքի՞ն այն վեհագոյն Գահերեցի՞ն, վեհագնեայ Տիրոգոչի՞ն տիեզերահռչակ Շահ-նամակի՞ն այս մասն ալ որ անարժանաբար Հայ գրակա-նոչքեան կ'ընծայաքերեմ, Դո՛ւ կենդանեաւ տեսնէիր և վա-յելէիր, աներկմիտ շինելով որ սա աշելի պիտի հեշտանար Քո քերթողական լոռքը և կիրք ճաշակիդ:

Այլ գրկեալ այս բախտէ, քաղցր պարտականոչքի՞ն կը համարիմ լոռիրել զայն գէթ Քո անմոռանալի յիշա-տակի՞ն:

Յ. Թ.

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Պարսից պատմութեան մէջ Արտաշիր-Քարականը այնպիսի եզական դէմք մ'է, հաւասար Կիւրոսի և Դարեհի, որ անոր կենաց ամէն մի մանրամասնութիւնը իւր կշիռն և արձագանգն ունի ընդհանուր պատմութեան մէջ: Մորա և իւր յաջորդներուն օրով մանաւանդ կատարուեցան Հայաստան աշխարհի մէջ ալ կրօնա-քաղաքական այնքան կարևոր եւ յիշատակելի դէպքեր որ նոր գոյութիւն եւ նոր ուղղութիւն դրոշմեցին մեր ընդհանուր երկրին և ազգին: Ուստի և իրաւամբ, մեզ՝ ամէն ազգէն աւելի՝ պէտք և պարտք էր այս հոյակապ դիւցազնին լիակատար կենսագրութեամբը հետաքրքրուիլ. այլ սակայն ցաւ է ըսել որ, մինչ եւրոպական մատենագրութիւնը զեղուն լինելու չափ ճոխ է, մերինը խիստ աննշան և աղքատ է այս մասին:

Ասկէց առաջ Կարնամակը հրատարակելով բաւական լոյս տուած էինք մենք, այլ որովհետև Ֆիրդուսի գերահռչակ բանաստեղծն ալ բաւական ընդարձակ և հանգամանօրէն կը ճառէ նոյն նիւթին վրայ՝ իւր աննման Շահնամակին մէջ, և տեղ տեղ ալ կը տարբերի Կարնամակէն, պարտ անձին համարած էինք այն մասն ալ անկէ ի հայ յեզուլ եւ Հայ ընթերցողին ծանօթացնել: Վասն որոյ, յետ աւարտելոյ զթարգմանութիւն Կարնամակի, ի Պարսկաստան, ձեռք զարկած էինք նաեւ ասոր և պատրաստած դրած էինք ի պահոյ, մնալով յարմար առթի՝ ի հրատարակութիւն: Ետոյ, Փարիզ, Անահիտ հանդիսին մէջ մի մասը լոյս տեսաւ թէև, սակայն շարունակելու պարապ և յարմարութիւն պակսելով պարտաւորած էինք ընդհատել:

Ահա նոյն գործն է որ իւր ամբողջութեամբ և յետ

### III

վերստին աչքէ անցընելու եւ բաղդատելու հոս Աստօր ճոխ մատենադարանի ընտիր օրինակներու եւ եւրոպական թարգմանութեանց հետ՝ կուտանք ի լոյս:

Բայց պատմական կողմը չէր միայն որ կը հետաքրքրէր զմեզ, այլ, դիւթեալ թովեալ արևելեան արուեստի գեղեցկութենէն, Ֆիրդուսիի մանաւանդ հոգեզմայլ դաշնակութենէն, անդիմադրելի նախանձ և ցանկութիւն ծնաւ ի մեզ թէ կրնանք արդեօք հայերէնով ալ, ի հետուտ գէթ եւ ստուերաբար, այն Հսկային շաւղացը հետևիլ: Եթէ միայն մեր ուժերուն անսայինք, չհամարձակէինք թերեւս այսպիսի յանդուգն ձեռնարկութեան մը, այլ լեզուին ընդունակութեանը եւ անհամեմատ ճոխութեանը վրայ ունեցած հաւատքնիս բաւական թելադիր և քաջալեր եղաւ մեզ: Պարտինք սակայն անվերապահօրէն խոստովանիլ որ մեր լեզուն, թէև ուրիշ շատ մասերու մէջ գերազանցօրէն օժտուած, սակայն ինչ ինչ կողմերով ալ յանհնարինս կը կաղայ, ձայնից զգալի երաժշտական մեղմ և հեղասահ ելևէջներուն կ'ակնարկենք յորս չզօրեր պարսկին և մի քանի ուրիշ լեզուներու գեղոլոր ճկունութեանը հասնիլ: Մեր այն բազմաբարդ և բազմավանկ, անհանդուրժելի և անչափելի բառերուն յուսահատական խճողումները և խիստ եւ թաւ և կոկորդալիւր ձայներու անխուսափելի խոնումները, անվերջանալի կը եր և ը երը և արտաբերութեան՝ ընդունուած այն տափակ եւ դանդաղ եղանակը, այս ամէնը կ'ըսենք, այնպիսի դժուարութիւններ գիտեն ստեղծել որոց առջեւ ամենէն վարժ գրիչն անգամ կը պարտաւորի յաճախ կասիլ և ընկրկիլ: Ուր որ, զոր օրինակ, պարսիկը, մէկ կարճ տողի մէջ, 5-6 և երբեմն աւելի բառեր մտցնելու հնարը գտնելով, լի՛ կուռ և բովանդակ կ'ընծայէ իմաստը, հայը երկու ահագ-

#### IV

նալուր բառերով իւր տողը լեցուած կը տեսնէ և իմաստներէ ոչ մին ըստ արժանւոյն բացատրուած: Կամ՝ հաւատարմութիւնը զոհելու է կամ՝ ճաշակը: Անխուսափելի է երկառածը:

Այլ սակայն փութանք աւելցնելու որ, որչափ ալ անհնարին երևնան այս դժուարութիւնները, անյաղթելի չեն. լեզուն բաւական հնարք կը մատակարարէ ճողոպրելու այս անել կարծուած բաւիղներէ: Փորձը կը ցուցնէ, արդարև, որ աշխատութեամբ՝ համբերութեամբ և քիչ մ'ալ վարժութեամբ մարթ է ամենէն ըմբոստ և անխոնարհելի կարծուածներն իսկ վերջապէս ձևի մը վերածել որ գոհացնէ միանգամայն թէ՛ հարազատութիւնը և թէ՛ ճաշակը: Ահա այս համոզմամբ եւ վստահութեամբ է որ կը համարձակինք ըսել թէ այս 1975 տող երկարաշունչ քերթուածին մէջ, ոչ մի անգամ պատահած է պարագայ մը յորում հարկադրուած լինինք մազիւ չափ շեղիլ հեղինակին բուն ոգիէն կամ դիտումէն և կամ զոհել ականջը եւ արուեստը: Յիշենք այս առթիւ, մի քանի մասնաւորութիւններն որոնց գլխաւորաբար ուշադիր եղած ենք յընթացս գործոյս:

Նախ չափու մասին ըսենք որ, մենք զմեզ բոլորովին մի և նոյն պայմաններու մէջ դնելու համար, ինչպէս Անահիտի մէջ ալ յայտարարած էինք, նոյն իսկ Ֆիրդուսիին գործածած չափերն ընդունեցինք, 6-5, ինչպէս յաճախ լսած և ստուգած ենք Նասր-էտ-տին և Մուզաֆֆէր-էտ-տին Շահերու քաջոլոր ընթերցողներէն, թէ և այս չափը քիչ գործածուած է մեր մէջ ուր սովորականն է 5-6: Այսու ամենայնիւ, միօրինակութիւնը խզելու համար, վերջերը՝ 4-4-3 ի փոխեցինք, տրոհում որով ալ մարթ է ընթեռնուլ զՇահնամակն ըստ Չա-

փական Օրինաց (Արուզ):

Որչափ որ կարելի էր զգուշացանք խորթ և խժա-  
լուր խոնուսներէ, բայի նոյն ժամանակներով յանգ կազ-  
մելէ, բառերը յօշոտելով կէսը նախընթացին և կէսը  
հետևորդին ուղքերը լրացնելու անախորժութենէ, իմաս-  
տը տողին վերջը առկախ ձգելով յաջորդով ամբողջա-  
ցընելու անտեղութենէն, բառը վերջացնող թոյլ և զազ-  
փաղփուռն ը երու վրայ բեռ բառնալէ, անբանաւոր եւ  
անհանդուրժելի յապաւումներէ, մանաւանդ ի բաղաձայ-  
նըս, կը երու և նոյն իսկ դիմորոշ ը երու անհարկի եւ  
զանցառելի գործածութենէ, ևն.:

Իսկ լեզուի մասին, արևմտեան աշխարհաբառը, որ  
մեզ աւելի ընտել է, հիմ առնելով հանդերձ, խտրական  
անձուկ ոգով մենք մեզ չզրկեցինք հայ լեզուի միւս ե-  
րևոյթներէն, կ'ուզէ գրաբառ ըսուի նա, կ'ուզէ արե-  
ւելեան կամ Արարատեան: Ինչ որ կը տեսնէինք գեղե-  
ցիկ՝ ուժգին և յարմարագոյն միոյն մէջ, մտադիւր կը  
փարէինք անոր՝ ընդ առաջ ելած դժուարութիւն մը  
բառնալու կամ հարկ մը գոհացնելու համար:

Թէ, այսչափ զգուշութիւններով հանդերձ, կրցած  
ենք արդեօք ըստ իմիք յաջողիլ, այն՝ ուշադիր ընթեր-  
ցողին է գիտելի: Կը ցանկայինք, թէ բաղդատութիւնը  
դիւրացնելու և թէ պարսկերէնի հետամուտ ուսանողաց  
առաջնորդելու նպատակաւ, բնագիրն ալ առընթեր դը-  
նել, բայց հոս այս կարգադրութիւնն անկարելի եղաւ.  
Թերևս ապագային:

10 Դեկտ. 1908  
Նիւ-Եօրք

Յ. ԹԻՐԵԱՔԵԱՆ

## VI

### ՄԻ ՔԱՆԻ ԽՕՄՔ ՖԻՐԴՈՒՍԻԻ ՎՐԱՅ

Հուշակաւոր Բանաստեղծը ծնած է (Յ. Ք.) 958 ին, Խորասանի Թուա քաղաքին մօտերը, Շատապ գիւղին մէջ, դեհկան ազնուատոհմ ցեղէ մը: Դեհկան կ'ըսուէին այն հին ազնուական Տուները որ գիւղերու՝ դաստակերտներու տէր լինելով՝ աւատական բարձր դասակարգը կը կազմէին եւ որք Արաբացոյ տիրապետութեան ժամանակն ալ երկար ատեն պահեցին իրենց գոյութիւնը:

Վերածնութեան հովն սկսած էր արդէն շնչել և անկախութեան ոգին ամէն կողմ զարթնումի նշաններ կուտար: Արաբ լեզուն եւ գրականութիւնը ամէն տեղ կը վտարուէր եւ նոյն իսկ փէհլէվին որ երկրին պաշտօնականն էր՝ Միջագետաց կողմերը միայն գործածական մնացած էր, իսկ բոլոր վերին և հիւսիսային Պարսկաստանի մէջ զուտ պարսկականն սկսած էր տիրել և զօրանալ: Զգտումն այն աստիճան ընդհանուր եւ ազգայնականութիւնն այն աստիճան բուռն էր որ 60,000 տող հսկայ գործին մէջ որ Ֆիրդուսիի գրչէն ելաւ, 60 բառ արաբ կամ օտար չգտնուեցաւ եւ եղածներն ալ, ըստ մեծի մասին, անուններ կամ տիտղոսներ են և կամ կոչումներ:

Սուլթան Մահմուտ Ղազնէվին որ նոր Պարսից գահը բարձրացած էր (997-1030 Յ. Ք.), փառասէր և հայրենասէր և քաջաւարժ և ճաշակի տէր, քաջալերուելով, մէկ կողմէն, տիրող այս ընդհանուր տրամադրութենէն և օգտուելով, միւս կողմէն, Պաղտատու Խալիֆայութեան հետ զհետէ տկարանալէն, բոլորովին ընդվզելով Ամիրայական իշխանութեան՝ բացարձակ պար-

## VII

զած էր անկախութեան դրօշը և ամէն կերպով ոյժ եւ խրախոյս կուտար ազգային վերակենդանութեան: Իւր արքունիքը, կ'ըսեն, Ակադեմիա մը եղած էր ուր կը դիմէին երկրին բոլոր տաղանդները և ինք արքայն սիրով և ախորժով ներկայ կը գտնուէր անոնց կաճառին: Ինքն էր դարձեալ որ ազգային Գիւցազներգութեան մը, Շահնամակին, առաջին խորհուրդը յղացաւ: Չեռնարկութիւնը նոր չէր. արդէն Նուշիրուանին օրովը ազգային անցից և վիպաց մի մեծ հաւաքածոյ կազմուած էր զոր շարունակած և ճոխացուցած էր Դեհկան Դանիշվէր, Սասանեան վերջին Յազկերտի հրամանաւ: Բաց աստի, կը գտնուէին նաև առանձին յիշատակարաններ՝ արձանագիրներ մասնաւորաց քով, մանաւանդ հին Տուներու, դեհկաններու, մօտ որք ամենայն խնամով թաքուցած պահած էին այս հին դիւանական գրութիւնները, իւրաքանչիւրն իր տոհմին սեփական առանձնականութիւններով հանդերձ: Սուլթանը հրաման ըրաւ ի մի ժողովել բոլոր այս ցիրուցան հնութիւնները եւ հինաւուրց ծերերուն ալ կենդանի զրոյցներն և աւանդութիւններն ի գիր առնելով ընդհանուր յիշատակարան մը կանգնել, չափեալ բանիւ և քերթողավայել ընտիր ճաշակաւ:

Յայնժամ՝ ի գործ մխեցան ժամանակին ընտրելագոյն տաղանդները, գերահռչակ բանաստեղծները, որպիսիք էին Անսարի՝ Ասճէտի՝ Ֆէրրուխի՝ Չէյնի՝ Խուրրէմի, և այլք որոց մէջ բաժնած էր արքայն նիւթը, փորձելու համար իրենց կարողութիւնը, որպէսզի հրմտագունին եւ կարողագունին յանձնուի ապա ամբողջ գործոյն կատարուամը:

Նոյն միջոցին էր որ առաջին անգամ մայրաքաղաք ոտք կը կոխէր Յճ տարեկան անփորձ և աննշան Ֆիրդուսին



## VIII

որ սակայն իւր ամբողջ կեանքը նմանօրինակ պարապմանց մէջ անցուցած լինելով՝ գերածայրեալ էր արդէն հմտութեամբ և տաղանդով:

Բախտ ունենալով Սուլթանին սիրելի Այազ վէզիրին բարեկամութիւնը վաստկելու, նորա միջոցաւ պատմական քերթուած մը ներկայացուց արքային որ շատ գոհ մնաց և հրամայեց յարքունիս յաճախել: Այլ սակայն նախանձը որ միշտ դարանակալ է արժանեաց՝ վառեց բորբոքեց արքունի Շաիրները որ նորեկը, իւր առաջին քայլերէն սահեցնելու համար, ջանահնար եղան փորձ մ'առաջարկել, արքային իսկ ներկայութեանը, որպէսզի Ֆիրդուսին խայտառակուելով արտաքսուի: Մրցման նիւթը եղաւ քառեակ մը որուն իւրաքանչիւր տողը բանաստեղծներէն մին պիտի ըսէր յանպատրաստից: (Նտրուած յանգն էր Շէն, յանգ մը որմէ երեք Շաիրի համար հազիւ երեք եզր կը գտնուէր լեզուին մէջ, և բնականաբար բացը պիտի մնար Ֆիրդուսին:

**Անսարի ըսաւ.**—Չոռն ա'րըզը դոռ մահ նկարչէտ թռչէն.\*  
**Ֆէրրուսի'**—Մանկնտի թռչիւկը կիշ նկարչէտ տէր կիշչէն.\*\*  
**Ասճէտի'**—Միշտկեանէդ կոշէր հեմի քոռնէտ տէր ձովչէն.\*\*\*  
և հեգնոտ քմծիծաղով կ'սպասէին Ֆիրդուսին որ անայլայլ և անվարան աւելցուց.

—Մանկնտի Սենան-կիշվ տէր ձէնկի ֆէչէն\*\*\*\*

Ակնկոր և շփոթած, հարցուցին ոստիները թէ ինչ է փէչէնը.—Այս ինչ տեղ և այս ինչ ժամանակին տեղի ունե-

\* Չէ կարելի լուսնին լինել պայծառ քան զքո այտեր.

\*\* Չիք ի բուրաստանի վարդ որպէս քո այտեր.

\*\*\* Արտեանունքդ (մէկ մէկ սլաքներ) զրահներն իսկ կը թափանցեն.

\*\*\*\* Ինչպէս Սենան-կիշվ՝ ֆէչէնի կուռին:

## IX

ցած հոչակաւոր պատերազմի վայրն է, ըսաւ Ֆիրդուսին: Յափշտակուելով թագաւորը նորա պատմական խորին հմտութենէն և բանաստեղծական անմրցելի գերազանցութենէն, իսկոյն բնակարան մը յատկացուց անոր՝ պալատին մէջ և Շահնամակի ձեռնարկել հրամայեց, առջևը դնելով բոլոր հաւաքուած նիւթերը, խստիւ արգիլելով միանգամայն որ բացի Այազէ և իւր սենեկապահէն՝ ոչ ոք իշխէ քովը մտնել, որպէսզի չ'խանգարուի:

12 երկար տարիներ այս բանտ-արքունեաց մէջ ճգնուց և արտադրեց Ֆիրդուսին, տանելով ամէն տեսակ զրկանաց որոց կ'ենթարկէր զինքը, յանգէտս Արքայի, Հասան-Մէյմէնդի անուն վէզիրը որ թշնամացած էր իւր հետը: Եւ երբ աւարտեցաւ գործը որ 60,000 տող էր, հրամայեց արքայն որ վճարուի իրեն, ըստ իւր խոստման, 60,000 ոսկի զոր սակայն հնարը գտաւ Հասան արծաթի փոխել, շրջելով թագաւորին միտքը և նուազեցնելով գործին արժէքը յաչս արքային: Օր մը, երբ բաղնիքէն հազիւ ելած, տեսաւ Ֆիրդուսին արծաթի պարկերը որ իւր բարեկամ՝ Այազին հետ խրկած էին, յանհնարինս վիրաւորուեցաւ և բաշխելով դրամը, 20,000 Այազին, 20,000 բաղնեպանին և 20,000 օշարակավաճառի մը, ինք ի փախուստ փութաց: Բայց մեկնելէն առաջ կնքեալ ծրար մը յանձնեց Այազին, խնդրելով որ 20 օր վերջը ներկայացնէ թագաւորին: Այս ծրարը կը պարունակէր այն հոչակաւոր երգիծականը որոյ ամէն մէկ տողը մէյ մէկ սայրասուր սլաք էր ուղղուած Մահմուտի կուրծքին:

Բորբոքեցաւ թագաւորը և ամէն կողմ մարդ հանեց, բայց իզուր, նա հեռացած ելած էր իւր սահմաններէն և չկրնալով իւր հայրենիքը դառնալ իսկոյն, թագաւորին վախէն, Պաղտատ և այլուր բազում և ձիգ տարիներ, նըժ-

## X

**դեհ և կարօտ թափառեցաւ: Ուր ուրեմն ապա յուսահատ  
և ուժասպառ, յանժանօթս ինք զինքը նետեց իւր ծննդա-  
վայրը ուր և կնքեց իւր ալեծուփ և բազմարդին կեանքը՝  
հասուն ալեոյթի մէջ, 1029ին (Յ. Ք.), Շահնամակը ա-  
ւարտելէն 11 տարի յետոյ:**

**Մինչ ասդին այս վախճանին կը յանգէին դէպքերը,  
անդին ալ վերջ իվերջոյ յաղթանակելով արդարութիւնը,  
իրազեկ և վշտահար, փութացեր էր թագաւորը խոստա-  
ցեալ 60,000 ոսկիի գումարն ուղարկել իրեն: Այլ աւանգ  
հեպնութեան բախտի. զի մինչ քաղաքին մէկ դռնէն ոսկե-  
բարձ ջորիները կը մտնէին ներս, միւս դռնէն անշնչացեալ  
դիակը կը հանուէր դուրս՝ Անոր որ յաւերժական փառքը  
լինել սահմանուած էր իւր երկրին և բովանդակ Ասիոյ:**

**ԴՐՈՒԱԳ Ա.**

**Բարակ երագին մէջ Սասանը կը տեսնէ  
և իշր աղջիկը սևոր կոշտայ**

— 0 —

- Երբ Դարեհը մեռաւ այն պատերազմին\*,**  
**Խաւարեցաւ արևն իւր բոլոր զարմին:**  
**Որդի մի ունէր նա, բախտաւոր՝ սիրուն,**  
**Խոհեմ՝ պատերազմիկ, Սասան իւր անուն:**  
5 **Սա երբ տեսաւ այն կերպ ըսպանուած իւր հայր,**  
**Եւ իրանու բախտը չըրջած վեր ի վայր,**  
**Ռուժ\*\* զօրաց առջևէն փախաւ նոյն պահուն,**  
**Եւ անձը չը մատնեց թակարդի մահուն:**  
**Մնցաւ Հընդկաց աշխարհ, մեռաւ վըշտարեկ,**  
10 **Ձըգելով մի եւեթ որդի պատանեկ:**  
**Այս էր նոցա մինչև չորիւր ազգ նըշան**  
**Որ հայր զորդին կոչէր անունով Սասան:**  
**Հովիւ էին նոքա միշտ կամ ուղտապան,**  
**կուրծք տալով ողջ տարին դառն աշխատութեան,**

---

\* Մեծին Ալեքսանդրի և վերջին Դարեհի պատերազմին կ'ակնարկէ:

\*\* Այսինքն Ալեքսանդրի բանակին, զի Մակեդոնացի աշխարհակալը իսկէնտէրը-Ռուժի ճանչցուած է Արևելիայց մէջ մինչև ցայսօր:

- 15 Կըրտսեր որդւոյն իրան գալ եղաւ փափաք,  
Դաշտ գընաց, գըտաւ մեծ հովիւը Բաբակ:  
Ըսաւ, «Պէտք ունէիք վարձուորի արդեօք  
Որ այս տեղ խեղճ է շատ ու շունի ոչ ոք:»  
Ընդունեց հովուապետն այս խեղճը նորեկ
- 20 Եւ կ'աշխատեցընէր խիստ գիշեր ու ցերեկ:  
Տեսաւ նորա վաստակն՝ հաւնեցաւ անոր.  
Պարզ հովիւ էր, հովուաց կարգեց գլխաւոր:  
Երբ մի գիշեր Բաբակ-Ռողեաբ\* էր ի քուն  
Անպէս մը երեցաւ իւր պայծառ հոգւոյն
- 25 Որ ամեհի մի փիղնըստած էր Սասան,  
Ունելով ի ձեռին սուսեր հընդկական:  
Ամէն այն որ անոր առջևը կուգար,  
Օրհնելով դըլուխը կը թեքէր ի վար:  
Անուշ էր իր լեզուն և շընորհալից,
- 30 վըշտահար սըրտերէ կը վանէր թախիժ:  
Միւս գիշեր Բաբակ երբ քուն մըտաւ նորէն,  
Հոգին սաստիկ խռոված էր յուզմունքներէն  
Երազին մէջ տեսաւ որ մի կրակապաշտ  
Երեք հատ վառ խարոյկ կը տանէր ի դաստ.\*\*
- 35 Որպէս, Ատըր-Գուշասպ ու Խորրատ ու Միհր,\*\*  
Պայծառ ինչպէս վահրամ, Անահիտ ու Միհր\*\*\*\*  
Բոլորը Սասանին կը վառէր առաջ,  
Եւ հալուէ բարդ ի բարդ կը ծըխէր ձախ, աջ:  
Բաբակ ըսթափեցաւ, վեր կացաւ քընից,

\* Այսինքն Ռողեաբայ որդին:

\*\* Ձեռքը բռնած:

\*\*\* Մեհրական դից նուիրեալ բազին:

\*\*\*\* Արեղակն:

- 40 Բայց հոգին էր տըրտում, սիրտը թախծալից:  
Ամէն ով որ երազ մեկնել կ'իմանայր  
Եւ այս գիտութեան մէջ հասեր էր ի ծայր,  
Բարակի դահլիճը եղան համախումբ,  
Բանիմաց ծերերու հետ նըստան ակումբ:
- 45 Բարակ պարզեց անոնց ինչ որ էր թաքուն,  
Եւ պատմեց մի առ մի տեսածներն ի քուն:  
Տըխրեցաւ յայնժամ մեծ երազագէտն յոյժ,  
Քաջն ի պատասխանիս եղաւ մըտայոյզ:  
Ուր ուրեմըն ըսաւ. «Արքայ վեհաշուք,
- 50 Մեկնութիւնը պէտք է լըսէք հիմա Դուք.  
Այն որ այնպէս փառքով չըքով դուք տեսաք,  
Նա թագ պիտի կապէ, վեր քան զարեգակ,  
Թէ նորա չելաւ այս երազը վերայ,  
Բախտը որդւոյն անշուշտ կը մընայ նորա:
- 55 Երբ Բարակ իմացաւ՝ ուրախ եղաւ շատ,  
Ընծաներ ըստ կարգի տըլաւ նոցա 'ռատ:  
Մի փոթորիկ օդով մարդ յըզեց արօտ,  
Հովուապետը եկաւ շուտ Բարակի մօտ.  
Փաթաթուած էր մի բուրդ կապայի մէջ բիրտ,
- 60 Համակ ձիւնաթաթախ և տըրոփ ի սիրտ:  
Օտարները բոլոր դուրս հանեց Բարակ.  
Ամէն ով որ կային ծառայ ու գուշակ.  
Սասանը մօտ կանչեց, նըստեցուց պատուով  
Եւ հարց ու փորձ ըրաւ գիտնալ թէ նա ո՞վ,
- 65 Ո՛ր ազգատոհմէն էր և ինչ իւր ծագում:  
Հովիւը լուռ կեցաւ, մեծ էր իւր յուզում.  
Հուակ ուրեմըն ըսաւ. «Արքայ, թէ խօսք տաս  
Որ հէք հովուիս բընաւ վընաս մը չիտաս,  
Ըսեմ քեզ իմ տոհմիս բոլորն անխափան,

- 70 Միայն թէ ափիդ մէջ դիր ափս ի պայման,\*  
Որ ինձ քեզմէ վընաս չը պէտք է հասնի,  
Ոչ ի յայտնի երբէք և ոչ ի գաղտնի:»  
Երբոր լըսեց Բարակ՝ բացաւ իւր բերան,  
Ուխտեց բարերարին Աստուծոյ անուան,
- 75 թէ «Բնաւ չեմ վընասեր քեզ, կաց ապահով,  
Կ'ընեմ քեզ երջանիկ, կը պահեմ պատուով:»  
Յայնժամ ըսաւ տրդան Բարակին թէ «Ես  
Սասանայ որդին եմ, ո՛վ քաջդ ի հանդէս,  
Շառաւիղ Արտաշիր աշխարհակալին
- 80 Զոր յիշողներ համայն թահման\*\* կոչեցին  
Որ էր պայզատ քաջին ըՍպանդիարայ  
Ժառանգին ըՇտասպայ\*\*\* աշխարհի վերայ:» -  
Բարակ որ այս լըսեց՝ յորդ հեղեղի պէս  
Ջուր թափեց աչքերէն այն երազատես:
- 85 Բերաւ յայնժամ ըզգեստ քաջ արանց յատուկ  
Եւ ասպ ու ասպազէն մի խոսրովաշուք\*\*\*\*  
Ըսաւ. «Հիմա գընա՛ մըտիր բաղանիս,

---

\* Ափը ափին մէջ դնել՝ խոստման ամենահանդիսաւոր և ամենաանդրժեղի եղանակն էր, ինչպէս այն ժամանակի քանդակներուն վրայ ալ տեղ տեղ կը տեսնուի:

\*\* Բահման կամ Վահման կամ Վահուման, ըստ Զրադաշտեան վարդապետութեան, մեծ Արարիչ-Որմիզդէն անմիջապէս ետքը կուգայ նախապատուութեամբ, և է նորա առաջին ստեղծումը, և Ամշասբանդաց (հրեշտակապետ) մէջ ալ առաջին տեղին ունի. և է նաև Դիք իմաստութեան: Արտաշիրին ցուցցած ծայրագոյն իմաստութեան պատճառաւ է որ զինք Բահման կոչած պիտի լինին:

\*\*\* Շտասպ կամ Գուշտասպ որ և Վշտասպ էր արքայ Պարսից Արեւմտեան պայազատութենէ, որ զառաջինն ընդունեց և հռչակեց Զրադաշտայ ուսումը:

\*\*\*\* Իմա արքայավայել:



Կաց անդ մինչև բերեն նոր շորեր՝ հագնիս:»  
 Նաև մի բնակարան ճոխ յարդարեցին,  
 90 Փառաց ի փառս հանեց իւր հովիւը հին.  
 Երբ որ հաստատեց զայն շքով՝ յայն պալատ,  
 Ծառայ ու սպասաւոր կարգեց նըմա շատ,  
 Ամէն ինչ որ պէտք էր լիովի տըւաւ,  
 Պերճանք ու ճոխութիւն ամբաւ՝ անզըրաւ,  
 95 Յետոյ իւր աղջիկը տըւաւ նըմա կին  
 Ջըքնաղագեղն ու իւր գլխու զարդն անգին:

Արտաշի ճնուռնիւր և Արտաշանին ոչ իչու մէջ տեղ

անցած դէպքերը

— 0 —

Երբ ամիս ինն անցաւ՝ մի արփենըման  
 Մանկիկ աշխարհ եկաւ նազելիէն ան.  
 Համատիպ Արտաշի՝ հաւուն մեծհամբաւ,  
 100 վեհ ու գեղատեսիլ ու սըրտագըրաւ:  
 «Արտաշի» տըւաւ հայրն անունկոչ նմա,  
 Որ նայելով անոր՝ սիրտն ուրախանայ:  
 Գիրկը կը մեծցընէր զայն գուրգուրալով,  
 Մինչև այսպէս անցաւ ժամանակ յոլով:  
 105 Նա ինքն է որ ամէն բանիմաց անձինք  
 «Արտաշի Բաբական» կոչեն հիմա զինք:  
 Ամէն ինչ պիտանի անոր ուսուցին,  
 Որով նոր փայլ առաւ հանճար բընածին:  
 Այնչափ էր քաջավարժ և գեղապայծառ  
 110 Որ կ'ըսէիր գէմքէն Լոյս ցոլար յաշխարհ:

- Արտաւանին\* հասաւ վերջապէս ականջ  
Պատանւոյն այս ձիւրքերն ու շնորհ հիւսկանչ,  
Թէ առիւծ ամենհի էր ի մարտի ան,  
Խորխնաններու մէջ Անահտայ նրման\*\*:
- 115 Արտաւան, յետ այնու, գըրեց մի նամակ  
Քաջ ու հրոչակաւոր իշխանին Բաբակ  
Թէ «Մի բազմահրմուտ և խոհեմազարդ՝  
Բանիրուն՝ անարատ և ոահուղիղ մարդ,  
Իմացայ քո որդին է քաջ ձիավար
- 120 Եւ կարի բանիմաց և խօսող ճարտար:  
Նամակս անածիդ պէս, ուղարկէ փութով  
Մեզ այն քաջ պատանին, գոհ ուրախ սըրտով:  
Ամէն ինչ պիտանի շնորհեմ աննիազ  
Եւ ի մէջ քաջերուս լինի գերանազ.
- 125 Բուն իմ որդւոցըս հետ այնպէս յօդուի ան  
Որ չըսէ ոք երբէք թ' է օտարական:»  
Երբ Շահին այս գիրը Բաբակ ընթերցաւ,  
Ցօղեց իւր աչքերէն արիւն ոչ սակաւ,  
Հրամայեց եկաւ շուտ իւր մօտը դըպիր,
- 130 Դեռահաս պատանին նոյն ինքն Արտաշիր.  
Ըսաւ. «Առ սա նամակն Արտաւանի, տես.  
Կարդա՛ ուշի ուշով, հասկըցիր, մինչ ես  
Մի պատասխան իսկոյն գըրեմ կէտ առ կէտ,  
Ուղարկեմ բարեմոյն մի ծառայի հետ.
- 135 Ըսեմ, ահա իմ սիրտ ու աչացըս լոյս  
Այն պատանին ընտիր՝ քաջ ու գեռաբոյս.  
Յըղեցի քեզ, տալով խըրատ մի քանի:

---

\* Արչակունի վերջին դէմք, ազգական մերոյս Խոսրովու,  
հօր Պարթևին Տրդատայ:

\*\* Աստիճան Հրատ մուրթակի նման լուսարձակ և փայլուն:

- Երբ վեհիդ տեսութեան լինի արժանի  
Դու այն ըրէ՛ ինչ որ արքայավայել,  
140 Մի գուցէ ժլտի հոմն երեսը շոյել:»  
Բացաւ գանձը Բաբակ հողմի պէս արագ  
Տըւաւ ինչ որ անդ կար ընտիր ու բարակ.  
Ոսկի երասանակ, հուժկու լախտ ու սուր.  
Ոչինչ զըլացաւ նա որդեկին ի տուր.  
145 Դիպակ ու դենար ու նըժոյգ ու գերի,  
Ճենեայ, բեհեզ, արժան մեծ թագաւորի:  
Քանձապահը բերաւ որ առնեն տանին,  
Արտաւանին ի սպաս մըտաւ պատանին:  
Հետը նակ ուրիշ շատ մը ընծաներ,  
150 Դենար, ոսկի և մուշկ և ազնիւ ամբեր:  
Մեծ հօրմէն զատուեցաւ տըղան բարեհետ,  
Եւ Շահին դուռն ի Ռէյ\* եկաւ այնուհետ:  
Երբ մօտեցաւ, իմաց տըւին Արքային,  
Եթէ հրաման ունի՝ երևնայ Շահին:  
155 Արտաւան ներս կոչեց պատանին սիրով,  
Եւ շատ բաներ հարցուց Բաբակի վրայով,  
Իր գահուն մօտերը տեղ ցուցուց անոր,  
Պալատէն ոչ հեռու՝ մի տուն փառաւոր,  
Ամէն տեսակ խորակ\*\* ու ազանելիք  
160 Ու պերճ կահ ու կազմած շընորհեց ի լիք:

---

\* Ռէյ որ և Հոագէս կամ Հոագայ, է հին երևելի մայրաքաղաք Մարաց կամ Մեդաց, վեց մղոնաւ հեռի Թէհրանէն՝ դէպ ի Հարաւ-Արեւելք. այժմ աւերակ: Կարծողներ կան որ Զրադաշտի ծննդավայրն եղած լինի:

\*\* Ուտելիք՝ ի ո որ արմատէն, յորմէ և խորտիկ:

- Պատանին և բոլոր ընկերք մեծանուն  
Եկան ուր Արտաւան որոշած էր տուն:  
Իր գահուն վերայ երբ ելաւ արեգակ,  
Եւ երկիր Ռոմուհոյ\* պէս եղաւ ճերմակ:**
- 165 **Ծառայ մը իւր մօտը կանչեց Արտաշիր,  
Եւ բոլոր ընծաներն այն ընտիր ընտիր  
Ինչ որ էր առաքեր Բաբակ ֆէհլէվան,  
Ուղարկեց, մատուցին Շահին Արտաւան:  
Որ իբրու թէ սա իւր մեծ որդին լինէր,**
- 170 **Այնպէս մի ժամանակ խընամ կը տանէր:  
Գինի՝ ուրախութիւն՝ որս, ամէն ուրեք,  
Շահն առանց պատանւոյն չէր լիներ երբէք:  
Որպէս մի ազգակից կը վարուէր յաւէտ,  
Եւ խըտիր չէր դըններ իւր որդւոցը հետ:**
- 175 **Դէպ եղաւ որ մի օր երբ որսի հեծան  
Եւ զօրք եւ Շահազատք եղան ցիր ու ցան,  
Արտաշիր զուգընթաց էր Արտաւանին,  
Քանզի միշտ սիրելին էր նա Արքային:  
Արտաւան չորս որդի ունէր, այնպէս որ**
- 180 **Կ'ըսէիր ամէն մէկն էր մի թագաւոր:  
Դաշտի մէջ հեռուէն երևցաւ մի ցիւ,  
Իրար անցաւ լաշկարն՝ առաւ թև ու թիւ,  
Սըլացաւ օդաչու երիվարներով,  
Քըրտինք ու թաւ փոշի իրար խառնելով:**
- 185 **Ամենէն առաջ էր անցեր Արտաշիր,  
Երբ մօտ եկաւ, լարեց աղեղ լայնալիր,  
Նըչան առաւ զիստէն կենդանին արու,  
Փըքինը մինչ փետուր խըրեցաւ հեռու:**

---

\* Բիւզանդուհեաց կ'ակնարկէ:

- Շուտով վազեց արքայն դիտելու զ'արկած,  
190 Եւ տեսաւ պատանւոյն մօտ ցիւռ պառկած.  
Ըսաւ, ո՞յր նետով որ այս ցիւռն է ինկեր,  
Պէտք է նոյն ձեռամբ ալ իյնայ նորա Կնկեր:  
Արքային պատասխան տըլաւ Արտաշիր  
Թէ իմ զարկածն է այդ, ես զարկի այս ցիւռ:  
195 Արքայորդին պընդեց թէ — Ո՛չ, այլ ես եմ,  
Եւ հիմա ընկերին հետքին կը վազեմ:  
Արտաշիրն ըսաւ. կաց, ահա դաշտն աղատ  
Եւ նետ ու ցիւռ այս տեղ առատ ու առատ.  
Մի ուրիշ ալ գընա՛ զարկ ասոր նըման,  
200 Սուտ խօսիլ չէ վայել պատույ տէր մարդկան:  
Արտաւան ցասմնալից եղաւ այս խօսքին,  
Երեսն ի վեր տըղուն գոռաց զայրագին.  
Ի՛մ է ի՛մ այս յանցանք, ի՛մ բարուց բերում  
Որ այդչափ հոգ տարի քեզ, ա՛յ ապառու՛մ:  
205 Ինչո՞ւ պէտք էր տանել քեզ ըսպայի հետ,  
Որս ու խրախճանութիւն և հանդիսակէտ.  
Որպէս զի կապտէիր իմ իսկ զաւակէս  
Փառք՝ պատիւ ու անուն քաջութեան այսպէս:  
Գընա՛ ձիերուս դու հոգ ու դարման տար,  
210 Եւ անոնց մօտ մի տեղ բըռնէ քեզ համար,  
Ախոռատանիս դու դէտ սալար եղիր,  
Զը լինի այլոց ու քո մէջտեղ խըտիր:  
Լեցան Արտաշիրին աչերն այն կէտին,  
Արաբ նըժոյգներու այն դիտապետին:  
215 Մի նամակ ուղարկեց իւր մեծ հօր ընդ հուպ,  
Վըշտաբեկ սըրտիւ ու գըլուխն ալեծուփ,  
Ըսաւ. «Ինչե՛ր հասաւ մեզ Արտաւանէն,  
Ախտանայ մարմինն ու ցաւք հոգին հանեն:»

- Թէ ո՛ւր էին գացեր և թէ Արտաւան  
220 ինչո՛ւ էր սըրտմըտեր, յիշեց ամէն բան:  
Երբ նամակը հասաւ ձեռքը Բարակին,  
Նա ոչինչ չը յայտնեց բընաւ ոչ մէկին.  
Դէպքը սակայն սըրտին շատ պատճառեց ցաւ,  
Գընաց գանձատունէն մի քիչ փող բերաւ,  
225 Ուղտի վերայ հեծցուց փութով մի դեսպան,  
Տըւաւ մի բիւր դենար, ուղարկեց մանկան:  
Նաև իսկոյն մօտը կանչեց մի դըպիր,  
Հրաման ըրաւ գըրել թուղթ առ Արտաշիր.  
Ըսաւ. «Ո՛վ անխըրատ դեռհաս պատանի,  
230 Երբ դու որսի ելար հետ Արտաւանի,  
Ինչո՛ւ առաջն առիր դու նորա մանկան,  
Նորա ծառան էիր դու, ոչ ազգական.  
Թըչնամութեամբ չըրաւ նա քեզ ոչ մի չար,  
Որչափ դու քեզ ըրիր անխորհըրդաբար:  
240 Հիմա, աշխատէ՛ որ սիրտն առնես տակաւ,  
Հրամանէն չելլես դուրս բընաւ ու բընաւ:  
Ահա քեզ դըրկեցի բաւական դենար,  
Մի քանի ալ խըրատ տըւի օգտակար,  
Նորէն կ'ուղարկեմ փող, երբ վերջացընես,  
245 Անցնի նայինք մի քիչ ժամանակ այսպէս:  
Սուրալով ուղտու վրայ ծերն ըզգօն ու ժիր  
Եկաւ հասաւ ուր էր մանուկն Արտաշիր:  
Սա երբ կարդաց նամակն՝ յոյժ ուրախ եղաւ,  
Միտքը գըրաւ գըտնել մի հընար ու դաւ:  
250 Ձիանի մօտ ընտրեց մի բընակարան,  
Թէպէտև իրեն չէր արժանի այնքան:  
Կահ ու կազմած, ըզգեստ՝ խոհանոց չքեզ,  
Ամէն ինչ յարդարեց ճոխապէս այնտեղ.

255 Գիշեր ցերեկ նորա գործն էր կեր ու խում՝  
Գինի՝ բաժակ՝ նըլագ՝ միակ ըզբաղում:

-)•(-

**Արտասանի Հարձին Արտաշիրին**

սէր կապելը և սևոր հետ

Փարսի կողմերը փախչիլը

Արտաւան մի պալատ ունէր գեղեցիկ,  
 Ուր կը պահէր խնամով մի սիրուն աղջիկ:  
 Գիւնար կը կոչուէր այն տիպար լուսնաթոյր,  
 Պատկեր ակնակուռ, բիւրերանգ ու բոյր.

260 Արքային համարեա՛ խորհրդական էր,  
 Եւ նորա գանձերը նէ կը պահպանէր:  
 Իւր անձէն աւելի էր նէ\* իւր աչքին,  
 Երբ զուրհին\*\* կը տեսնէր ուրախ էր հոգին:  
 Մի օր աղջիկն ուրախ՝ տեսաւ տանիսէն

265 Որ Արտաշիր նըստած զուարթ էր ու շէն:  
 Հայեցաւ ժրպտագին շուրթերուն նորա,  
 Նա գահ դըրաւ իսկոյն իւր սըրտին վերայ.  
 Ըսպասեց մինչև օրն եղաւ մութ իսպառ,  
 Մօտեցաւ գիշերը, եկաւ խոր խաւար,

270 Պարըսպին ժանիքէն անցուց մի կառան,  
 Մի քանի հատ հանգոյց հաստատեց վըրան,  
 Սըկըրդեցաւ իջաւ յանդըգնաբար ցած,

\* Բնագրին մէջ դէմքերուն շփոթութիւն լինելուն՝ նէ ձեւ  
 ւր օգնութեան առինք զանազանելու համար:

\*\* Նոյն պատճառաւ հոս ալ ուրհի կոչման դիմեցինք ու  
 բոշելու համար զաղջիկը, զի ուրհի, ուրհի = Հուրի:



- Գոհութիւն մատոյց առ Բարերարն Աստուած:  
Երբ նազաքայլ եկաւ Արտաշիւրի քով,  
275 Գոհարավառ՝ մուշկ ու ամբար բուրելով.  
Նորա գլուխը դիպակ բարձէն առաւ վեր  
Բազկացը մէջ սեղմեց, մինչ նա կը զարթնէր:  
Պարմանին հայեցաւ պիչ այն գեղուհւոյն,  
280 Հիասքանչ էր դէմքն ու հերքն ու բոյր ու գոյն:  
Ըսաւ այն լուսնեկին — Դու ուստի՞ եկար,  
Պարգևել դիւր իմ այս սըրտիս վըշտահար:  
Աղջիկն ըսաւ, — Ես մի աղախին եմ խուն,  
Սիրտ ու հոգիս համակ քո սիրով զեղուն.  
Գանձապահն եմ Շահին և հարճ մեծագին,  
285 Ինձմով միայն զըւարթ է նորա հոգին:  
Յետ այսու թէ հաճիս քո ստրուկն եմ ես  
Եւ ինձ այն է կեանք որ տեսնեմ քո երես:  
Թէ կամիս կուգամ ես քո մօտ ամէն օր,  
Խաւարըդ փարատեմ, ընեմ լուսաւոր:  
290 Մի ժամանակ այսպէս ի գըլուխ հանին,  
Մինչև խորտակեցաւ անիւ պաշտպանին.  
Մեռաւ աշխարհափորձն ու արթուն Բաբակ,  
Ուրիշի թողլով այս հինաւուրց բընակ:  
Արտաւանին երբ այս գոյժն հասաւ ականջ,  
295 Տըխրեցաւ յոյժ, մըթնեց սըրտիկն ալետանջ:  
Փարսի գահուն տընկեց աչք ամէն մի մեծ,  
Բայց Արքայն տըլաւ զայն իւր որդւոյն երէց\*:  
Հրաման ըրաւ բերին տաւիղն անարի,  
Պալատէն դաշտ հանեց զօրքը քաջարի:

---

\* Արչակունեաց վերջին շահաւիդ Արտաւանը Ռէյ կը նստէր,  
իսկ Բաբակ, նորա կողմանէ, Փարս նահանգին կուսակալն էր:

- 300 Արտաշիրին խաւար դարձաւ լոյս աշխարհ,  
Այն ձեռընտու՝ ըզգօն ծերունւոյն համար:  
Արտաւանի սպասէ զըզուած էր նա յոյժ,  
Փոխեց իսկոյն իւր միտքն երբ առաւ այս գոյժ:  
Այնչափ դառն եկած էր սըրտին այս կորուստ,  
305 Որ ամէն կողմէ ելք փնտռէր ի փախուստ:  
Դէպ եղաւ որ մի օր Արքայն Արտաւան  
Աստեղագէտներէն լուրջ ու գիտնական  
Մի քանին իւր առջև կանչեց ի պալատ  
Եւ իւր աստղ ու բախտէն հարցուց նոցա շատ.  
310 Եւ թէ ժամանակի յարհուրով շըրջան  
Ո՞ւմ արդեօք յետ այսու տայ պիտի օճան:  
Գիւնարի թաղն անոնք ուղարկեց արքայն  
Որպէս զի լաւ զննեն աստղերը համայն:  
Երեք օր այս գործին անցաւ ժամանակ,  
315 Նայուեցաւ արքայի բախտին շարունակ:  
Չայներնին կը հասնէր ճիշդ գանձապահին,  
Կը լըսէր ինչ բախտէն նոքա պատմէին:  
Երեք օր մինչ երեք պահ անցնէր գիշեր,  
Աղջիկն ականջ կուտար և ահ կը քաշէր.  
320 Անձուկ ի սիրտ շըրթունքն հառաչելով ցած,  
Միտքը պահեց բոլոր ինչ որ էր լըսած:  
Օրն երբոր չորս եղաւ, եկան գիտուններ  
Ըսել Արտաւանին ինչ որ են գիտեր.  
Առին իրենց զիչերն ու գործիքն ի թև,  
325 Եկան աղջկան թաղէն Արքային առջև:  
Բերին Հաստատութեան գաղտնիքն ի հանդէս,  
Եւ կատարումն ալ թէ երբ, ինչո՞ւ, ի՞նչպէս:  
Ըսին թէ շատ չանցած, այս իսկ ըրպէին .  
Մի ծանրը վիշտ պէտք է հասնի Արքային:

- 330 Մի ոմն ի կըրտսերաց, իշխանազն ու քաջ  
Պէտք է իւր տիրոջմէն փախչի վըտարանջ:  
Եւ թագաւոր լինի նա ահեղասաստ,  
Բարձր ու աշխարհակալ մեծափառ ու բաստ:  
Վըշտացաւ կարեւելէր յանհընարին ցաւ՝
- 335 Երբ արքայն մեծանուն այս լուրն իմացաւ:  
Այն ինչ երկրի երեսն էր դեռ կիսաղօտ,  
Գեղուհին ըշտապեց Արտաշիրի մօտ:  
Ծովի պէս փոթորկած փըրփրայր պատանին,  
Չունէր մի օր իսկ ժոյժ մօտ Արտաւանին:
- 340 Աղջիկը լիով զայն ըրաւ խելամուտ  
Ինչ որ Արտաւանին ըսաւ մոգն հըմուտ.  
Երբ որ ասոնք այսպէս լըսեց Գիւլնարէն,  
Լըռել ու ըսպասել որոշեց իրեն:  
Ջայրոյթը հասած էր սակայն ի կատար
- 345 Եւ չէր խորհեր այլ ինչ քան փախուստի ճար.  
Ըսաւ. ես այս Ռէյէն թէ գընամ իրան,  
Դէպ այն արի արանց վայրըն ու կայան,  
Կը համաձայնիս դու գալ՝ հետ լինել միշտ,  
Թէ Շահին քով այստեղ սիրես կալ նաժիշտ:
- 350 Թէ գաս՝ իշխանութեան կը հասնիս, արի,  
Պարծանաց թագ լինիս մի մեծ աշխարհի:  
Պատասխանեց աղջիկն. Ես ահա քո եմ,  
Չեմ բաժանուիր քեզմէ ցորչափ որ գոյ եմ:  
Հառաչալիւր չըրթամբք կը հեծէր կուլար
- 355 Եւ դեղին ջուր յաչացն հոսէր անդադար:  
Պարմանին Նազելտյն ըսաւ. Պատրաստ կանց,  
Վաղը պէտք է չըւենք աստի անկասկած:  
Աղջիկն եկաւ անկէ իւր տեղն անյապաղ,  
Դընեւելով իւր հոգին և մարմինն ի խաղ:

- 360 Երբ արևը ծագեց, դեղնեցաւ երկիր,  
Պըրկեցաւ կապուեցաւ գիշեր սևակիր,  
Գիւլնարը գանձատան գընաց բացաւ դուռ,  
Ամէս տեսակ գոհար ժողվեց շուտ ու լուտ,  
Յակինթ ընտիր, քարեր արքայավայել,  
365 Ոսկի արծաթ որչափ պէտք լինէր պահել.  
Բերաւ ասոնք բոլորն իր յատուկ սըրահ,  
Եւ այն տեղ խընամով գաղտ գըրաւ ի պահ,  
Մընաց այն տեղ մինչև լեռնէն իջաւ մութ,  
Նընջեց արքայն ու վերջ առաւ ել ու մուտ:  
370 Սըլացաւ նետի պէս տեղէն նոյն ժամայն,  
Արտաշիրին բերաւ գոհարներն համայն:  
Տեսաւ փառախընդիրն, բաժակ ի ձեռին.  
Ախոռապանք արբեալ՝ քուն էին խորին:  
Երկու նըժոյգ ընտիր ջոկուած էր արդէն  
375 Կ'ըսպասէին թամբած սարքած յասպազէն:  
Երբ աշխարհատենչը տեսաւ ըզԳիւլնար  
Եւ այն ընտիր ընտիր քարերն ու դենար,  
Ձըգեց ձեռքէն բաժակն իսկոյն թերաքամ,  
Վազեց անցուց արաբ ձիերուն լըկամ.  
380 Ըզգեցաւ իւր զըրահն, աշտանակեց ձին,  
Սուսեր թունաջըրեալ կրելով ի ձեռին:  
Մի այլ նըժոյգ հեծաւ իւր պարմանուհին,  
Սլացան արշաւասոյր արահետ ուղին:  
Դէմ եղեալ դէպ ի փարս գնային անդադար,  
385 Որոնելով ճամբայ, զըւարթ ու կայտառ:  
Եւ քանզի այնպէս էր սովոր Արտաւան  
Որ չէր լիներ առանց աղջկան մի վայրկեան,  
Ձէր հաներ վերմակէն դուրս թև ու բազուկ,  
Բարենըսիհ Գիւլնար թէ չըտար անդ շուք:

- 390 Երբ քընից վեր կալու եկաւ ժամանակ,  
Եւ պըճնելու զգահն ի բեհեզ ի դիպակ,  
Աղջիկը չերեցաւ սընարին անոր.  
Բարկութենէն Արքայն եղաւ խելացնոր:  
Ջօրքը մօտ առ դըրան կ'ըսպասէր կանգուն,  
395 Գահ ու թագ ու պալատ համակ յարդարուն.  
Պալատէն յայնժամ դուրս ելաւ մեծ սալար,  
Մօտեցաւ Արքային, ըսաւ. — «Վեհափառ,  
Մեծամեծք ու երկրին համօրէն իշխանք,  
Ժողվըւած դըրան մօտ կ'ըսեն թէ ներս գանք:»

—)°(—

Արտաշան կ'իմանայ Արտաշիրին

փախուստը սղջկան հետ և

անոնց ետևէն կը պնդի

- 400 Պատասխանեց Արքայն թէ ինչո՞ւ այսօր,  
Ինչպէս որ օրէն էր և ինքն ալ սովոր,  
Չեկաւ սընարիս մօտ Գիւլնար ինչպէս միշտ.  
Մի գուցէ ինծի գէմ ունենայ մի վիշտ:  
Նոյն միջոցին եկաւ Դըրան մեծ Դըպիր,  
405 Ըսաւ թէ փախած է գիշերն Արտաշիր,  
Տանելով ճերմակն ու սև երկու ձիան  
Որ Արքային միայն էին սեփական.  
Կորոյս նաև Արքայն իրեն նազելին,  
Ջի փախաւ նորա հետ գանձապետուհին:  
410 Յընցուեցաւ ուժգին սիրտն արքային արի,  
Ցառքեց վըրան աշխէտ իւր երիվարի,  
Այրուձի բազմաթիւ հեծան ի քամակ,

- կ'ըսէիր կրակ ու բոց թափէին համակ:  
Ճանապարհին եկան մի բարգաւաճ շէն,  
415 Մարդիկ ու անասունք ժողվըւած անդէն:  
Հարցոց թէ յետ մըտիցն արևու այտի,  
Լըսեց արդեօք մէկը ձայնի պէս պայտի.  
Երկու հոգի պիտի անցնէր այս տեղաց  
Մին սպիտակ մին սեաւ երիվար հեծած:  
420 Մէկն ըսաւ թէ – Այո՛, երկու ձիաւոր .  
Անցան ասկէ դէպ ի դաշտերն հեռաւոր .  
Ետենուն կը վազէր մի խոյ ասրագեղ,  
Փոշին վեր հանելով որպէս ձի ահեղ:  
Դաստուրէն\* Արտաւան հարցոց թէ ինչո՞ւ  
425 խոյ մըն ալ անոնց հետ ինկեր է ի չու:  
Ըսաւ. Բախտէն փառաց պարգևն է նորա .  
Գահու բարձրանալու սա թեն է նորա .  
Եթէ հասաւ անոր, կըտրելով ճամբան,  
Դըժուար կը լինի մեզ յայնժամ ամէն բան:  
430 Ցած իջաւ այն պահուն Արտաւան ձիէն,  
Կերաւ հանգըստացաւ և հեծաւ նորէն:  
Կ'ըշտապէին բըռնել շուտով զԱրտաշիր,  
Առջևէն Արտաւան, ետևէն վէզիր:  
Պատանին աղջրկան հետ մըրըրկավար,  
435 Կանգ չառած կ'երթային անդուլ անդադար:  
Այն որու զօրավիզն եղաւ յերկնից բախտ,  
Չը զօրեր այլ անոր թշնամի լախտ:  
Յոգնեցաւ Արտաշիր վազան ու թազան,\*\*

\* Դաստուր = մոգպետ, նաև մեծ վէզիր, (տես Կարնու-  
մակ Եր. 65, ծան. 57)

\*\* Թազեմ նայն է ընդ պ. Թ ա խ Թ է ն և Թ ա զ ի յ տ է ն  
ի, որ է վազել:

- Երբ տեսաւ վերէն մի ջրոյ աւազան,  
440 Փութաց Գիւլնարի մօտ, ըսաւ—«Հատաւ ոյժ.  
Երկուքնիս ալ խոնջած վաստակած ենք յոյժ.  
Պէտք է ցած գալ այս տեղ մօտ աղբերական,  
Քանզի խորտակեցանք թէ՛ մենք թէ՛ ձիան.  
Մի քիչ ջուրէն խըմենք, կազդուրուինք տակաւ,  
445 Յետոյ շարունակենք ճամբան ըշտապաւ:»  
Երբ հասան, երկուքն ալ այնպէս դեղնորակ,  
Եղած էին այտերն որպէս արեգակ.  
Արտաշիր կամեցաւ իջնալ այն տեղ ցած,  
Երկու մանուկ տեսաւ ջրի ափ կեցած,  
450 Կը պոռային ուժով թէ՛ Շուտ առ շուրթափ,  
Ոտքըդ դիր ասպանդակ, սանձըդ առ շուտ ափ,  
Ձի պըրժար դու ձեռքէն շունչէն վիշապին,  
Ձէ ժամանակ յամել ջուր խըմել ափին,  
Պէտք չէ որ ցած իջնաս, առնես այս տեղ կանգ  
455 Եւ անձըդ տարապարտ մատնես ի վըտանդ:  
Երբ այս զեկոյցն այսպէս լըսեց Արտաշիր,  
Ըսաւ Գիւլնարին թէ՛ Այս խօսքին միտ դիր,  
Պընդեց ոտքը՝ թուլցուց և զերասանակ,  
Ճօճացուց դէպ երկինք փայլուն իւր նիզակ:  
460 Միւս կողմէն Արտաւան ետեւուն ինկած,  
Հովի պէս կը վազէր, հոգւով միգամած:  
Երբ ցերէկէն անցաւ կէս մի մեծ հարուստ,  
Եւ լուսատուն չափեց կամարն ի վերուստ,  
Գիւլ մի տեսաւ պայծառ շէն ու բարգաւաճ,  
465 Մարդիկ համայն ընդոստ վազեցին առաջ:  
Հարցուց մոզպետներէն թագաւորն հըզօր  
Թէ՛ երբ անցան անկէ երկու ձիաւոր:  
Այսպէս պատասխանեց առաջնորդ Մոզպետ—



- 470 «Արքայ վեհանրախ, պերճ խորհրդագէտ,  
Այն պահուն երբ արև դեղնեցաւ ի մուտ,  
Եւ գիշերն ըզգեցաւ իւր վերարկուն մութ  
Ասկէ սլացան անցան երկու ձիաւոր  
Փոշեթաթախ համակ և բերաննին չոր.  
Մէկուն ալ ետևէն մի խոյ կը ցատքէր
- 475 Որոյ նըկարտանց\* մէջ չեմ տեսած պատկեր:»—  
Արտաւանին յայնժամ մեծ վէզիրն ասաց.  
— «Լաւ է թէ ետ դառնաս այլ ևս այս տեղաց.  
Ջօրք ժողովէ, մարտի պատրաստութիւն տես,  
Քանզի հանգամանաց փոխուեցաւ հանդէս.
- 480 Եթէ հասաւ նըստաւ բախտ նորա քամակ,  
Ի զուր է մեր պընդեղն, հով կ'որսանք համակ\*\*  
Մի նամակ գրէ իսկոյն, ուղարկէ որդւոյդ,  
Նամակիդ մէջ այս կէտն յայտնէ անծածկոյթ.  
Թերևըս նա մի հետք անցընէ ի թաթ.
- 485 Արտաշիր ոչխարէն չը կըթած դեռ կաթ:»  
Արտաւան, երբ հատաւ այս սուղ հարցուփորձ,  
Հասկըցաւ թէ իրմէն անցաւ ալ այն գործ.  
Կանգ առաւ ուր որ էր, ձիէն իջաւ ցած,  
Պաղատանքներ ուղղեց Տուղին բարեաց:

—)•(—

---

\* Նկարներու թանգարան:

\*\* Մի պարոկական ոճ, ասելու համար թէ «ի զուր կ'աչ-խատինք»:

Արտաւասն կը գրէ իշր որդոյնի՝  
Բահմանի՝ քաներու համար  
զԱրտաշիր

- 490 Երբ գիշերը լուսցաւ, ծագեց օր վաղուան,  
Զօրաց ետ դառնալու տըւաւ հըրաման.  
Եկաւ, եղեգնի պէս այտեր դեփ դեղին,  
Մըտաւ մութ գիշերով ի Ռէյ իւր տեղին:  
Մի թուղթ գըրեց որդւոյն, պատմեց թէ ինչ դաւ  
495 Այս գործին մէջ ամէն կերպով ծայր տըւաւ:  
Մեր քովէն Արտաշիրն այնպէս փախաւ ետ  
Որպէս երբէք չթուաւ աղեղ-լարէն նետ,  
Փարսի կողմերն եկաւ, (որոնէ՛) ծածուկ,  
Մարդու չիմացընես, գործէ կամացուկ:»  
500 Միւս կողմէն ծովեզերք հասաւ Արտաշիր,  
Գոհացաւ ու ըսաւ.—«Դու, ո՞վ դաստակիր,\*  
Դու զիս աղատեցիր չար անըզգամէն,  
Զը տեսնէ՛ իւր մարմին դուր հանգիստ. Ամէն:»  
Շունչ քաշեց մի սակաւ, կանչեց նաւապետ,  
505 Անցած դէպքերէն շատ խօսակցեցաւ հետ:  
Հայեցաւ ծերունի ուշիմ՝ նաւավար  
Արտաշիրին հասակ՝ լանջ ու դէմքն ի վար,  
Հասկըցաւ որ Քէյազն\*\* է նա անկասկած,  
Շուք ու կերպարանքէն իւր հոգին խայտայ:

---

\* Նպ. տէսթկիր, որոյ հին ձևն է դաստակիր որ կը նշանակէ  
ձեռք բռնող, ձեռնտու, օգնական, և այլն:

\*\* Հին՝ Սքեմենեան ցեղազատութենէ որ աւելի Քէյեան կը  
գործածուի պարսից մէջ:

- 510 վազեց Արտաշիր ծով, նետուեցաւ մի նաւ,  
Շըրջեցաւ ծովեզերքն ողջոյն սըրարչաւ:  
Իւր անունը լըսողն եկաւ շուտափոյթ,  
Գումարեցաւ այնտեղ մեծ ըսպայակոյտ:  
Ամէն ով որ, ի Սդահր, էր Բարեկի թեր,  
515 Լըսելով Շահին գալն հոգւով կը հըրճուէր.  
Եւ այլ որ Դարեհի տոհմէն էր սերած  
Եւ յերկրէ ի յերկիր կար թափառայած,  
Երբ իմացան գալուստն Արտաշիր Շահին,  
Ծերն առոյգ դառնալով ի կանգնում գահին  
520 Ծովէն սարէն գըրոհ գըրոհ սիրտ ի թունդ,  
Պատանւոյն քով գային բոլոր գունդագունդ:  
Ամէն կողմէ մարդիկ ուշիմ հեռատես,  
Համախումբ ատենի կազմեցին հանդէս:  
Յայնժամ բացաւ բերանն Արտաշիր մանուկ,  
525 Ըսաւ.— «Աղէ՛, քաջեր, գուք ինձ լըւարուք.  
Ձիք այս ատենի մէջ այսչափ հոյակապ,  
Եւ խըմբեալ իմաստուն մարդերէն այսչափ,  
Մէկն որ անգիտանայ թէ չարն ըՍկանդար\*  
Ինչեր աշխարհիս մէջ չըրաւ վատաբար:  
530 Մեր նախնիքն ըսպաննեց նա միահամուռ  
Եւ անիրաւաբար զաշխարհ անցուց բուռ.  
Ես լինիմ ի տոհմէն ըՍպանդիարայ\*\*  
Եւ Արտաւան իշխէ՛ այս երկրի վերայ:

\* Մակեդոնացւոյն Աղեքսանդրի կականարկէ, որու հետ մինչև հիմա անհաշտ են Մազդեզնադանդ Փարսիները, Քէյեան Հարստութեան վերջ տուած ըլլալուն համար:

\*\* Արտաւան Պարթև-Արշակունի էր, հետևաբար օտարական, մինչ ինքը Արտաշիր Դարեհազնեայ էր, Սպանդիարայ սերունդէն, այսինքն բուն հարազատ:

- Արժան է որ չըսենք — արդար և իրաւ —  
585 Եւ չընդունինք այս կարգն ու դարման՝ բընաւ:  
Եթէ դուք ինձ սատար լինիք այս գործին,  
Ես այս թագն ու գահը չեմ տար ուրիշին:  
Ի՞նչ պատասխան կուտաք և ի՞նչ կը խորհիք,  
Բարձր ի ձայն ամէն ոք յայտնէ իւր կարծիք:»  
540 Ով որ աշխարհախումբ ատենին մէջ կար,  
Ի սուներ՝ ի խորհուրդ և ի բան ճարտար,  
Երբ լրսեցին այս խօսք, կանգնեցան յոտին  
Եւ արձակ համարձակ կարծիք յայտնեցին,  
Թէ՛ Բարեկայ ցեղէն որչափ որ աստ կանք,  
545 Քս դէմքը տեսնելով շատ ուրախ եղանք.  
Եւ որչափ որ ազգէն Սասանայ կամք աստ,  
Վինու գօտին ընդ մէջ ածել եմք պատրաստ\*:  
Մենք հոգւով ու մարմնով բոլորանըւէր,  
Ուրախ՝ տըրտում՝ առատ՝ նուազ, քո՛ եմք, Տէ՛ր:  
550 Կըրկին ծագմամբ դու բարձր ես ուրիշներէն.  
Թագն իրաւամբ քո՛ է քեզ անկ և օրէն:  
Ակնարկէ՛ և հարթենք սարերն ի դաշտ լերկ,  
Ծովի ջրերուն տանք սըրով արեան ներկ:  
Երբ որ այսպէս լրսեց արին Արտաշիր,  
555 Բարձրացուց գըլուխ քան զՄնահիտ և Տիր.\*\*  
Քովեց անոնց եռանդն ու այնուհետեւ,  
Բոլոր թափովն ինկաւ վըրիժու ետեւ:  
Մի քաղաք հաստատեց ծովեզերքը որ  
Քործի, յետոյ, դարձաւ կեդրոն կարևոր:  
560 Մի մովպետ Արտաշրին յայնժամ մօտեցաւ,  
Ըսաւ. «Ա՛րքայ գերաստղ ու սըրտագըրաւ.

\* Այսինքն վրէժխնդրութեան:

\*\* չրատ եւ Փայլածու մոլորակներ՝ անձնաւորեալ, որոց

- Տէրութիւն կը հիմնես Դու այսօր անկախ,  
Սակայն պէտք է Փարսէն խլել որոմը նախ.  
Յետոյ Արտաւանի հետ մըտիւր ի հեռ,  
560՝ Քանզի նոր էք թէ աստղ և թէ խոսրով դեռ:  
Ձի գանձով հաւասար չը կայ իշխան ոք,  
կրնայ պատերազմին Քեզ պատճառել հոգ:  
Միանգամ որ խախտես նորա գահ տեղաց,  
Ոչ ոք ապա կ'իշխէ Քո ելլել դիմաց:»  
565 Երբ իմացաւ խըրոխտն ու սէզն Արտաշիւր  
Այս խըրատներն ուղիղ և իմաստալիր,  
Լերանց գըլխէն արեն հազիւ տըւած ծայր,  
Չըւեց այն ջըրափէն դէպ ի Ստահրն\* ի վայր:  
Բահման Արտաւանայ որդին առաւ լուր,  
570 Խոցուեցաւ սիրտն ու ինք տըրտում ու տըխուր,  
Չը յամեց մի ըոպէ վերայ իւր գահուն,  
Չօրք ժողվեց ու բանակ կազմեց նոյն պահուն:

—)•(—

Արտաշիւր Տաքսկէն օգնուքիւն գտնելով  
Բահմանին հետ կը սրսերազմի  
և կը յաղթէ սևոր

Մի մարդ կար անուանի, կոչէին Տաքակ,  
Շատ զօրք ու զէնք ունէր և խելքով ատակ,

---

պաշտօն կը կատարուէր նաև ի Հայս:

\* Հին Պերսեպոլիս, մայրաքաղաք Դարեհի՝ Քսերքեսի,  
որոյ աւերակները միայն կը տեսնուին այժմ Մերվ-Դաշտի  
վրայ 7-8 Փարսախաւ հեռի ի Շիրազէ:

- 575 Զահրամի\* նա յայնժամ տէր ու իշխանն էր,  
Կենցազազէտ՝ խոհեմ ու հրամանի տէր:  
Եօթ բարեբաստ որդւոց հայր էր նա պառաւ,  
Թողուց Բահմանն իսկոյն երբ այս լուրն առաւ.  
Սըլացաւ ի Զահրամ դէպի Արտաշիր,  
580 Զօրք՝ Թըմբուկ՝ կարասի՝ աղիս, համայնն ի կիր:  
Երբ ըՍպահապետի նըշմարեց երես,  
Ձիէն ցած իջաւ շուտ, որպէս էր դա ծէս,  
Վազեց համբոյր տըլաւ ոտիցը չորա  
Եւ շատ բան խօսեցաւ Սասանեանց վերայ:  
585 Փառահեղն Արտաշիր սիրով ընդունեց  
Եւ շուտ գալուն համար պատիւ ցուցուց մեծ.  
Սակայն կասկած ունէր Տաբակէն նա միշտ,  
Կը տազնապէր սիրտն ու կը վախէր ալ ճիշդ,  
Ճանապարհին շատ էր նա ծերէն ըզգոյշ,  
590 Զի նորա շատ էր զօրքն ու առաւել ոյժ:  
Աշխարհի փորձ ունէր ծերուկն հոգեկիր,  
Ըզգաց իսկոյն տազնապն յոր էր Արտաշիր.  
Եկաւ, Զենդ-Աւեստայն\*\* բերելով իւր հետ,  
Ըսաւ թէ. «Բարձրեալն Աստուած իրագէտ,  
595 Բառնայ Թող անպիտան հոգին Տաբակայ  
Եթէ կեղծ ինչ նորա սըրտին մէջը կայ:  
Երբ իմացայ թէ այս ջուրին ամին ի վեր,  
Արտաշիր արքայն շատ զօրք է հաւաքեր,  
Այնպէս զըզուանք եկաւ ինձ Արտաւանէ,  
600 Որպէս մի պատանւոյն՝ պառաւ մի հանէ:

\* Յարսիստանի մէջ, Շիրազու հարաւ-արեւելեան կողմը,  
բաւական կարեւոր քաղաք մ' է:

\*\* Նուիրական Մատեան Դենի Մագդեղանց՝ յայտնեալ Զրա-  
դաշտայ՝ դենապետի հին Պարսից և այժմու Փարսիներու:

- Զիս ծառայ բարեմիտ անձնուէր Քեզ կալ,  
Համբերատար՝ ըզգօն՝ գաղտնապահ՝ ժուժկալ:»  
Երբ այսպէս իմացաւ Արատշիր, անդէն  
Փարատեցաւ կասկածն ի սպառ իւր սըրտէն,  
605 Հօրը տեղ դըրաւ զայն ցըվերջ այնուհետ  
Եւ իւր քաջաց կարգեց ըզնա զօրապետ.  
Հանդարտեցաւ Շահին սիրտը խըռովեալ,  
Միտքը դըրաւ խորրատ ու Ռամ\* ուխտ գընալ:  
Կը խնդրէր ու հայցէր Աստուծոյ առաջ,  
610 Որ ուղղէ իւր գընացքն ի բարին յառաջ,  
Յաջող ելք տայ գործոց որ նա զարնէ ձեռք,  
Ի շխանութեան ծառին պարգևէ Նա բերք:  
Յետոյ մըտաւ խորանն իւր գեղայօրէն,  
Զօրավարը մատոյց մի աղերս իրեն:  
615 Հետեակ ու հեծեալ առաւ ի համար,  
Գիտնալ թէ որոնք են սըրտոտ ու սալար:  
Երբ ի հանդէս եկան հինգ հազար զինուոր  
Քաջարի՝ քաջապինդ՝ գոռ դաշունաւոր.  
Մի առ մի ճանաչեց ու հարցուց անուն,  
620 Զօրապետին յայտնեց խնդութիւն անհուն:  
Դըրամ բաշխեց զօրքին, գոհ զըւարթ ըրաւ,  
Յերկնից հայցեց շընորհ բարեաց անզըրաւ,  
Երբ ահեղ վագրի պէս զօրքն եկաւ ի կազմ,

---

\* Երկու հին համբաւաւոր ասորուշաններ, խորրատը լինի  
Թերևս Հուր-Ատր = Ատրահուր (Կարնամակ, Եր. 43),  
այն է Հրատ մուրակի նուիրեալ մեհեան: Իսկ Ռամը՝ Վահ-  
րամ-Ատր = Ատր-Վրամ: Կարնամակի մէջ Ատրհրուբայ  
մեհեան կը յիշուի որ նոյն թուի լինել ընդ Ատրահուրի =  
Հրատայ:

- Բահման Արտաւանի դէմ վազեց ի ռազմ:*
- 625 *Երբ մօտ եկան տակաւ զօրքը բարդ ի բարդ,  
Սըլացան կորովի ախոյեանք ի մարտ.  
Երկու կողմէն լաշկարն ի ճակատ բերին,  
Ճօճացին տէգ՝ նիզակ՝ գեղարդ ի ձեռին:*
- 630 *Երբ հոլացաւ կապոյտ կամարն իւր ծածկոյթ,  
Յառաջեց Տաբակայ զօրքն ի ռազմ՝ անքոյթ,  
Պատատեցան զօրէն առիւծներ ահեղ,  
Գետահետեալ վազեց արիւն իբր հեղեղ,  
Մինչև որ հուակ ապա դեղնեց արեգակ,  
Օդը պատեց փոշի, գետինը՝ դիակ:*
- 635 *Մի մըրրիկ յեղակարծ փըրթաւ ան ատեն,  
Արտաշիր խոյացաւ բանակի սըրտէն:  
Խուճապեց ի փախուտ Բահման-Արտաւան,  
Մարմինը նետախոց, հոգին տըխրական:  
Շահ-Արտաշիր փութով պընդեցաւ ըզհետ,  
640 Փողերը գոռալով և տեղալով նետ:  
Այսպէս մինչև ի Ստահր հասաւ ըշտապաւ  
Ուր էր Բահմանայ գահն ու փառքն ու համբաւ:  
Երբ ընթացաւ հըռչակն արքային յաշխարհ,  
վազեց ամէն կողմէ զինուոր անհամար:*
- 645 *Բացին անոր առջև գանձարանը փակ  
Ջոր հազար նեղութեամբ դիզած էր Բաբակ:  
Բաշխեց ոսկին արծաթն առատ իւր զօրաց  
Քաշեց ֆարսէն բանակն՝ այսպէս զօրացած,*

—)•(—



Արտաշան զօրածողով լինելով  
կը յարձակի Արտաշրի վրայ և  
կ'սպաննուռի պատերազմի մէջ

- Արտաւանին այս լուրն երբ հասաւ ականջ,  
650 Սարսափ ինկաւ սըրտին, եղաւ մտատանջ.  
Ըսաւ թէ երկնից այս խորհուրդը թաքուն  
Յայտնած էր ինձ երբեմն այր մի իմաստուն:  
Այն չարը որ խելքի մըտքի տակ չիյնար,  
Միթէ ջանքով անկէ կայ փախչելու հնար.  
655 Չէի կարծեր բընաւ թէ Արտաշիրէն  
Մի փառախընդիւր դուրս գայ առիւծօրէն:  
Բացաւ դուռը գանձին՝ վըճարեց ոտճիկ,  
Ճամբեց զօրքն, հոգալով պէտքերը քաջիկ:  
Գիլանէն, Դայլամէն զօրքն եկին հասին,  
660 Փոշին բարձրացաւ վեր մինչև ի լուսին:  
Միւս կողմէն Արտաշիր հաւաքեց լաշկար,  
Որ քամու կը կըտրէր անց ու ճանապարհ.  
Երկու նետընկէց լոկ մընաց անջրրպետ,  
Հողին տակի օձէն քունն եղաւ անհետ:  
665 Ձի բամբէր թըմբուկ ու փողեր գոռային,  
Ղօղանջէին արոյրք ու զանկ հընդկային,  
Աղմըկէր գոռայր զօրք, դրօշներ փողփողէր,  
Մանիչակ սուրն հընձէր մարդու գըլուխներ:  
Քառասուն օր տեւեց այս նախճիրն ահեղ,  
670 Հրպատակաց համար աշխարհ եկաւ նեղ:  
Եւ զի դաշտի երես լեռնացած էր յոյժ,  
Վիրաւորեալք կեանքի չունէին այլ ժոյժ:  
Հուակ ապա մի թուխ ամպ կանգնեցաւ վերև  
Որ այլ ամէն ճիգ ջանք հանեց ի դերև:

- 675 Մի փոթորիկ փըրթաւ ահագնաժըխոր,  
Սարսափով համակեց սըրտերըն ի խոր:  
Տատանեցան լերինք, պատուեցան դաշտեր,  
Դըղըրդին բարձրացաւ քան զեթեր ի վեր:  
Զարհուրեցաւ բանակն Արտաւանի 'սպառ,  
680 Գոչեցին մի բերան եւ միաբարբառ  
Թէ այս հողմ յերկնից է մեզ համար փորձանք,  
Ալ այս բանակին վրայ պէտք է լանք ողբանք:  
Եւ այն օրն որ սաստիկ էր ջարդն ու խաթար,  
Խելքի մարդիկ համայն խընդրեցին դադար:  
685 Թուաւ ամբոխին մէջէն Արտաշիր Դարար\*,  
Լըսուեցաւ շառաչին նետից ի տարափ,  
Խըռան մէջ ձեռք ինկաւ Արտաւան անոյժ,  
Թագի համար տըլաւ իւր հոգին անոյժ,  
Մարդու մը ձեռամբ ոյր խորրատ էր անուն,  
690 Որ տարաւ քաշելով լըկամը ձիուն:  
Կանգնեցուց առաջի Արքայի զգերի,  
Արտաշիր զայն տեսաւ երբ շատ էր հեռի:  
Փութապէս Արտաւան ձիէն իջաւ վար,  
Մարմինը ծակծըկած, հոգին մութ խաւար.  
695 Դըժխեմին\*\* ակնարկեց Արտաշիր Արքայ—  
«Ընդ առաջ ել, ահա թըշնամին կուգայ,  
Զարկ դաշոյնը, կըտրէ մէջքէն անխուսափ,  
Թող վատախոհներուն սիրտն իյնայ սարսափ:»  
Դահիճը կատարեց շուտ հրամանն այդ,  
700 Եղաւ վաղ աշխարհէ անուանին անյայտ:  
Այսպէս է հինաւուրց մեր այս անուոյ խաղ,

\* Այս. Դարեհեան, զի Դարեհ պ. Դարա և Դարար կը գրուի:

\*\* Այս. դահիճին:

*Այսօր Արտաւանի և Արտաշրի վաղ:*

*Այն որ մինչև յաստեղս բարձրացուց այսօր,*

*վաղն ի հող ի փոշի կայ թաւալգըլոր:*

705 *Բըռնըւեցան երկուքն յորդտոց այնգունակ*

*Որ ազգատոհմն Արշայ\* մնաց անփառունակ:*

*Երկուքին ալ պընդեց ոտքերն ի կոճեղ,*

*Եւ ուղարկեց ի բանտ թագաւորն ահեղ:*

*Միւս երկու մեծ որդիք փախան վաղ արդէն,*

710 *Ջերծան վըտանգներու անել թակարդէն:*

*Հընդկաստանի ճամբան ձեռք առին լալով,*

*Կ'արժէ ասոնք ուրոյն պատմել խընամով:*



---

\* Արշակունեաց նախնւոյն անունն էր Արշ կամ Աշ յորմէ Արշակ կամ Աշակ: Պարսիկք կը կոչեն Աշկանեան:

ԴՐՈՒԱԳ Բ.

- Կըռուոյ դաշտն աւարաւ ծածկած էր համակ,  
 Զէնք ու զարդ ու ոսկի արծաթ անքանակ.
- 715 Հըրամայեց Արքայն, ժողվեցին բերին,  
 Բաշխեց ապա զօրաց իւրաքանչիւրին:  
 Աւագանւոյն մէջէն դուրս թըռաւ Տաբակ,  
 Սըրբեց Արտաւանայ արիւնոտ դիակ.  
 Լըւաց, մաքրեց փոշին, կոծելով վըրան,
- 720 Մի արքայավայել դըրաւ դամբարան:  
 Մէջքի վէրքը պատեց, ծածկեց դիպակաւ,  
 Գըլուխը զարդարեց քափուրէ թագաւ,  
 Պատուիրեց զօրքերուն, ի Ռէյ գընացող,  
 Որ ոչ մինն ոտ դընէ արքունեաց ի հող:
- 725 Յետոյ Արտաշիրին մօտն եկաւ դարձեալ,  
 Ըսաւ. — Ո՛վ թագաւոր դու խըրատընկալ,  
 Պայմայէ՞,\* դու անոր աղջիկն ա՛ռ քեզի,  
 Նորա գահ ու թագ ու գեղ ու փառք է զի.  
 Քեզ կը լինի թագն ու գանձըն անբաւ ան
- 730 Զոր այնչափ նեղութեամբ դիզեց Արտաւան:  
 Արտաշիր ընդունեց այս խըրատը լաւ,  
 Մարդ ուղարկեց աղջիկն ուզեց ու առաւ:  
 Հանգիստ ըրին ամսոյ մի չափ կամ երկու,  
 Հըզօր ըՍպարապետն ու սպայն ահարկու:
- 735 Ռէյէն ի Փարս անցաւ արքայն քաջարի,  
 Յոգնութիւն առաւ քիչ մ' աղմուկէն հեռի:

---

\* Պ ա յ մ ա յ ի տ է ն էն = փորձէ՛, ո՛ւզէ, պայմանաւորուէ՛:

Մի դաստակերտ հիմնեց ուր լի հաւասար  
 Փայլէր պալատ, այգի, աղբիւր, դաշտ ու սար,  
 Զոր ազատըն Դեհկան,\* ծերունին այն ժիր,  
 740 Կը կոչէ Նորա Կուսմբ խորրայ-Արտաշիր:\*\*  
 Մի շուր բըղխէր այնտեղ անոյ՝ անարատ,  
 Առուներու բաժնեց, վազցուց յորդառատ.  
 Մի ատրուչան հիմնեց մօտ այն աղբեր հոն,  
 Նորոգեցաւ Սաղայ Մեհրակայ\*\*\* պաշտօն.  
 745 Շուրջըն ալ այգեստան հրապարակ ու տուն,  
 Շինուածովք գեղեցիկ, ընդարձակ, սիրուն:  
 Երբ աւարտեց արքայն պերճ գիտուն, հըզօր,  
 Մարզպանը զայն քաղաք կոչեց Շահրի-զօր:  
 Շուրջանակի գիւղեր հիմնեց շէն ու ճոխ,

---

\* Ֆիրդուսին իւր պատմութեան երկու գլխաւոր աղբիւրներ ունէր. 1. իւր ժամանակին հին ազնուականութիւնը որոնց մէջ խնամով պահուած էր աւանդութիւնը և կը փոխադրուէր յորդոց յորդի, և 2. գրաւոր հին նշխարք որք ցիր ասդ անդ, մանաւանդ ազնուականութեան մէջ, ամենայն սրբութեամբ կը պահուէին: Այս ամէնը, մանաւանդ առաջինը, հաւաքաբար անձնաւորելով Դեհկան կը կոչէ որով կ'իմանայ հին ազնուական Տանց սերունդները: Տե՛ս Յառաջարան եր. VI և Կարնամակ եր. 120, ծան. 113.

\*\* Կամ Արտաշիր-խորրայ, այն է՝ բաժին կամ մասն Արտաշրի (Կարնամակ եր, 80, ծան. 71): Այսպէս կոչուեցաւ այն Շահաստան կամ Դաստակերտը զոր հիմնեց Արտաշիր ի Փարս:

\*\*\* Երկու Լուսաւորք, զի երկնային մարմնոց պաշտօնը նախ քան զՋրադաշտ իսկ կար, Մահաբատէ սկսեալ, որ նսեմացած և զրեթէ խափանուած էր առ Սրչակունեօք:

- 750 Հաւաքեց բընակչաց մի յոյժ մեծ ամբոխ:  
Մի հատ ալ ջըրամբար նըշմարեց ի խոր,  
Լեռը պէտք էր պատուել հասնելու անոր:  
Բահ բըրիչ, գործաւոր թափեց անհամար,  
Հարիւր ջըրանց բացին լերանց կողն ի վար.
- 755 Հասուցին Շահրի-զօր ջուրերն ապահով,  
Շէնցաւ իսկոյն տընով, տեղով, անանով:

—)o(—

Արտաշի ռազմը Քրդաց հետ  
և անոնցմէ յաղթուիչը

- Անթիւ զօրք ըՍտահրէն բերել տըլաւ կազմ,  
Պատրաստեցաւ երթալ Քուրդի պատերազմ:  
Երբ մօտեցաւ անոր Արտաշի արքայ,  
760 Քուրդըն անթիւ զօրքով դէմն ելաւ որ գայ:  
Մի գործ էր սա չընչին՝ եղաւ դըժուարին,  
զի Քուրդի կողմն ելան մարդիկն աշխարհին:  
կազմըւեցաւ իսկոյն մի պարսիկ բանակ  
Բազմաթիւ քան ըզՔուրդ, միոյն երեսնեակ.
- 765 Մինչ գիշեր, օր ամբողջ, մըղեցին կըռիւ,  
Հուսկ ապա արքային զօրքն եկաւ ցըրիւ,  
Դիտապաստ ու բեկեալ անջքան էր ի տես,  
Որ ահագին գաշտին նեղ կուգար երես:  
Բաց ի թագաւորէն և մի քանի սպայ,
- 770 Ոչ ոք մընաց այնտեղ անուանի հըսկայ:  
Փոշիէն ու տօթէն ջերմ արեգական  
Ցամքեցան լեզուներ ճայթ ի ճայթ եկան,

- Երբ գիշերը պարզեց իւր դըրօշն ի յօդ,  
Դադրեցուց ուզմ' ու խազմ', աղմուկ ու շքփոթ:  
775 Մի խարոյկ նըշմարեց լեռնակողմի մերձ,  
Փուխթապէս հոն դիմեց գըրոհիւ հանդերձ.  
Դէմ' գըրաւ Արտաշիր դէպի այն խարոյկ  
Մի քանի ընկերով թէ՛ ծեր թէ՛ առոյգ:  
Երբ մօտ եկաւ՝ տեսաւ հովիւներ էին,  
780 Որ այժ ու ոչխար անդ մակաղեր էին.  
Ցած իջաւ Արքայն ու ըՍպայ ձիերից,  
Ռազմի դաշտի հողով բերան փոշելից:  
Արտաշիր ջուր ուզեց խըմելու սակաւ,  
Վազեցին բերին ջուր, մածուն ըշտապաւ:  
785 Հանգչեցաւ և մի քիչ կերաւ ինչ որ կար,  
Սեաւ գիշերն ըզգեցաւ իւր սըքեմ խաւար:  
Մահիճ արժանընտիր՝ փըռեց վերարկուն,  
Բարձ ըրաւ սաղաւարտն արքայ իւր գըլխուն:  
Այգը երբ անդընդոց վերայ կ'երևէր,  
790 Իրանայ Շահի գլուխ քընից կեցաւ վեր:  
Եկաւ սընարին մօտ գըլխաւորն հովուաց,  
— «Չարը քեզմէ հեռու լինի միշտ, ասաց,  
Որպիսի փորձանք քեզ բերաւ այս ուղին,  
Որ վերարկուդ ըրիր դու քեզ անկողին:»  
795 Շահ ճանապարհ հարցուց հովիւէն ընդ փոյթ,  
Թէ ո՞ւր կըրնանք գտնել մի տեղի անքոյթ:  
Ըսաւ. — «Դու չես գըտներ աստ ապատ տեղի,  
Թէ չառնես մի մարդ որ ցոյց տայ քեզ ուղի:  
Չորս փարսախ որ գընաս ճանապարհ աստի,  
800 կը գըտնես այնտեղ դու տեղի հանգըստի.  
Անկէց անդին գիւղեր կից են իրարու.  
Ամէն գիւղի մէջ կայ մի անձ մեծարու:»

- Երբ լըսեց Արտաշիր հովուէն այս խօսքեր,  
Մի քանի ծեր առաւ իւր հետ ուղընկեր.  
805 Լեռնէն իջաւ մի գիւղ Շահն ըՍպահապետ,  
Վազեց անոր առաջն իսկոյն դեհապետ:  
Ձիաւոր ուղարկեց ծեր ու դեռվիրայ  
Անկէ շիտակ դէպ ի Արտաշիր-Խորրայ:  
810 Զօրքը երբ լուր առաւ արքայէն այսպէս,  
Ճամբայ ինկաւ ուրախ զուարթ փութապէս.  
Լըրտեսներ ուղարկեց բանգէտ ու ատակ,  
Որպէսզի դիտեն գաղտ Քըրդերու վիճակ:  
Սուրացին լըրտեսներ, տեսան, դարձան ետ,  
Ու եկան պասմեցին Շահին կէտ առ կէտ:  
815 Ասացին թէ «Քուրդեր վառ, զըւարթ, անհող,  
Շահին վերայ բընաւ չը խորհիր ոչ ոք:  
Այնպէս կը կարծեն թէ ի Ստահր Արտաշեր,  
Մաշեցաւ իւր առոյգ բախտէն, եղաւ ծեր:»  
Ուրախացաւ արքայն երբ առաւ այս լուր,  
820 Աւ ուրիշ խօսքերու չը դըրաւ նա լուր:  
Ընտրեց զօրաց մէջէն՝ կուտեալ բարդ ի բարդ,  
Երեք հազար հեծեալ քաջ սուսերամարտ.  
Ազեղնաձիգ հազար և կապարճ ու նետ.  
Այս ամէնը համուռ Շահն առաւ իւր հետ:

-)°(-

Արտաշիր գիշերայն կը յարձակի Քրդաց վրայ  
և զակոնք կը ջարդէ

- 825 Երբ արև դեղնեցաւ՝ ոահ տըւաւ զօրաց,  
Այն որ չը տարուելիք էր այնտեղ մընաց:  
Կէս գիշերն որ անցաւ, մութ պատեց երկիր,



Թըշնամույն մօտ հասաւ Շահն աշխարհակիր.  
Տեսաւ դաշտի երես կան փըռուած ի քուն,  
830 Յոյզ ու խուճապ սըրտին մէջն է ամենուն:  
Երբ մօտեցաւ Արքայն ի Քուրդին սընար,  
Ձըգեց երասանակն օղաչուին՝ վար,  
Մերկացուց իւր սուսեր, մըտաւ ի բանակ,  
835 Դալար խոտին գըլուխն արեան դրաւ պըսակ:  
Բոլոր դաշտի երես գըլուխ ու ձեռք էր.  
Քուրդը ջարդ ու կոտոր գետինն էր ծածկեր.  
Ձըկար գերիներուն ալ չափ ու քանակ.  
Յիմար գողոզութիւնն եղաւ խայտառակ:  
Աւար առին նոցա տուն ու տեղ ու բուն,  
840 Ոսկի ու թագ բաշխեց զօրաց ամենուն:  
Այնպէս եղաւ որ մի դենարով լի տաշտ,  
Բարձած ի գլուխ մի ծեր թէ տանէր ի դաշտ,  
Ոչ ոք կը դարձընէր աչք ի նորա դեհ,  
Այնչափ էր Շահին ահն ու օրուան նըսեհ:  
845 Չուզեց փառք ըստանալ նա այն քաղաքէ,  
Վերադարձաւ ի Ստահր անյապաղ անկէ.  
Հըրամայեց – «Ձիանն արէք կազմ ու վառ,  
Տեսէք զէնքերու մէջ չը լինի խաթար,  
Վայելեցէք հանգիստ՝ տօն ու խըրախճան,  
850 Ձի շուտ պիտի գայ հոգ պատերազմական:»  
Կերուխումի յայնժամ ըսկըսան քաջեր  
Եւ երբ բաւականի պընդեցան մէջեր,  
Պատերազմի փոյթին ինկաւ Արտաշիր,  
Դու լաւ այս պամութիւնն ի միտ առ, ուսիր:

—)•(—

Պատմութիւն Հաշրոշարի եւ անցք  
և արկածք Որդի-ի

- 855 Լըսէ զարմացիր ինչ ըսաւ ինձ Դեհկան,  
Երբ նա մերկացաւ ինձ խորը պատմութեան  
Գուշարան քաղաքի, ծովեզեր Պարսից,  
Թէ ինչ ելեւէջ անդ երեւցաւ անցից:  
Մի քաղաք կար փոքրիկ ու շատ բազմամարդ,  
860 Ուր մէն մի կ'աշխատէր ու կ'ապրէր հանդարտ:  
Այն քաղաքին մէջ շատ աղջիկ կար աղքատ,  
Մի կըտոր չոր հացի համար բազմաշխատ:  
Մէկ կողմէն շատ մօտիկ էր նոցա՝ լեռը,  
Խումբ եղած կ'երթային հոն աղջիկները:  
865 Ամէն մէկը կ'առնէր մի չափով բամբակ  
Եւ մի հատ տօսախի փայտէ մանիլակ:  
Դարպասս որ հասնէին մի խումբ ձեւացած,  
Ճեմելով կուգային դէպ ի լեռան ցած:  
Ուտելիքներն համայն խառնէին իրար,  
870 Քանզի աւել պակաս տարբեր ինչ չը կար:  
Ուտելէ քընելէ չէր լիներ զըրոյց,  
Իրենց բոլոր հոգն էր մանածներու ցոյց:  
Իրիկուն որ լինէր՝ կը դառնային տուն,  
Բամբակը թել եղած երկայնատըտուն:  
875 Այն քաղքին մէջ մի մարդ կար զըւարթ աղքատ,  
Անուն կը կոչէին նըմա Հաւթովատ:  
Ինչո՞ւ էին դըրբեր այդ անուն նըմա.—  
Քանզի եօթ ուտերաց հայր եղած էր նա\*:  
Մի հատ ալ պատուական դուտոր ունէր, իրաւ,

---

\* Տե՛ս կարնամակ եր. 80 և 85:

- 880 **Բայց նա աղջիկը մարդ չէր հաշուեր բընաւ:**  
**Եղաւ որ աղջիկներն համախումբ, մի օր,**  
**իլերն առած նըստած էին սարի 'ստոր:**  
**Ուտելու ժամն հասաւ, ձըգեցին իլեր,**  
**Պատրաստելու ելան ով ինչ որ ունէր:**
- 885 **Բախտաւոր մեր աղջիկն յանկարծ մի խընծոր**  
**Տեսաւ ճամբու վերայ, քամին ձըգած նոր.**  
**վազեց վերցուց գետնէն, կըրկին դարձաւ ետ,**  
**Տես ինչ զարմանալի դէպքեր այնուհետ:**  
**Երբ խածաւ խընծորը կոյսըն այն գեղայտ,**
- 890 **Մէջէն խոշոր գիրուկ մի որդ եկաւ յայտ,**  
**Մատիկովը մէկդի առաւ զայն կամաց,**  
**Իւրմանին մէջը դըրաւ թարմ ու թաց:**  
**Երբ որ անկէ բամբակ ուզեց որ առնէր՝**  
**Ըսաւ.— «Յանուն նորա որ չունի ընկեր,**
- 895 **Ես այս օրըս բախտովն այս խընծոր-որդի,**  
**Գործի մէջ հըրաչքներ ցուցընեմ պիտի:»**  
**Խընդացին աղջիկներն, ուրախ եղան շատ,**  
**Բացուեցան այտերն ու ատամներն արծաթ:**  
**Ամէն օրուան կըրկին մանեց նա այն օր,**
- 900 **Նըչանակեց գետին համրանքը բոլոր:**  
**Թըռաւ ծուխի պէս տուն, մօրն ասաց թէ տեա՛ւ.**  
**Ո՛րչափ շատ մանեցի բամբակ այսօր ես:**  
**Սիրեց գովեց շատ շատ մայրիկը զանի,**  
**Ըսաւ — Բախտըդ բաց է, ո՛վ իմ գեղանի:**
- 905 **Գիշերը համրեցին թելերըն ամբողջ,**  
**Առտուն ամէն օրուան կըրկինն առաւ ողջ.**  
**Երբ հասաւ նա իւր այն փութաջան խըմբին**  
**Որոց գործի հետ էր սիրտ՝ հոգի՝ մարմին,**  
**Ըսաւ բարեհամբաւ այն աղջիկներուն,**

- 910 - «Ո՛վ իմ չըքնաղագեղ ընկերներ սիրուն,  
Որդի բախտով այսօր այնչափ մանեմ ես  
Որ այլ կարօտութեան չը տեսնեմ երես»:  
Վերջացուց տարածը անոնցմէ առաջ,  
Թէ լինէր աւելի՛ կը մանէր նա քաջ:
- 915 Տարաւ տուն մանածը տըւաւ մայրիկին.  
Դրախտազըւարճ խայտաց կընկանը հոգին:  
Ամէն առտու մի քիչ խընծորիկ կուտար  
Իւր որդիկին՝ բարի աղջիկն հոգատար:  
Որչափ ալ շատ առնէր բամբակ ամէն օր,
- 920 Տակէն կ'ելլէր աղջիկն այն խորհրդաւոր:  
Հայր ու մայր ասացին մի օր միաբան,  
Հրնարագէտ՝ ճարպիկ այն բարի աղջկան,  
Թէ դու որ այնչափ շատ կը գործես մանած,  
Միթէ պարիկներու դու քոյր ես եղած:
- 925 Յայնժամ աղջիկը պարզ մերկացաւ իւր մօր  
Խընծորին ու որդին գաղտնիքը բոլոր.  
Ցուցուց այն բախտաբեր որդիկն ի պահոյ,  
Աւելցաւ խընդութիւն մարդուն ու կընոյ:  
Բաստ համարեց իրեն այս բանը Հաւթուատ
- 930 Ալ իր գործին վերայ չէր իսկ խորհեր շատ.  
Որդի բախտէն էր միշտ խօսքը շարունակ,  
Նոր փայլ առին օրերն իւր անփառունակ:  
Մի ժամանակ այսպէս անցաւ, եւ մարդուն  
Օր քան զօր կ'աւելնար բարեբախտութիւն:
- 935 Որդն ալ չը մոռացան նոքա բընաւին,  
Կեր կուտային ու միշտ հոգ կը տանէին:  
Խոշորցաւ աճեցաւ նորա մարմնոյ զանգ,  
Փայլեցաւ գըլուխն ու քամակն երփներանգ.  
Ալ այն իլի փոսիկ նեղ կուգար անոր,

- 940 Շապիկն ալ մուշկի պէս սեւացաւ բոլոր:  
Մուշկի տակէն քըրքում դեղին փայլ կուտար  
Նորա լանջն ու քամակն ամբողջ վերէն վար:  
Մի սև մաքուր սընտուկ շինեցին անոր,  
Փոխադրեցին որդիկն իր այն տեղը նոր:
- 945 Այնպէս եղաւ սր ալ այն քաղաքին մէջ,  
Առանց Հաւթուատի չէր լիներ դատ ու վէճ:  
Բարձրացաւ նորա յարգն ու ինչք ու պատիւ,  
Զօրացան նաև իւր որդիքն եօթնաթիւ:  
Մի հոյակապ իշխան կար այնտեղ բընակ,  
Փառահեղ ու գոռոզ, ունէր և բանակ.
- 950 Պատճառներ կը փընտոէր նա ամէն ատեն  
Որ մի քիչ փող շորթէր խեղճ մեր Հաւթուատէն:  
Իսկ սա գլուխը ժողովեց բաւական մարդիկ,  
Բաւական ալ առին եօթ իր քաջ որդիք.
- 955 Փողերը Գուշարան հընչեցին ահեղ,  
Հորդեցին, ի ձեռին՝ տէգ, սուր ու աղեղ:  
Հաւթուլատ առջեւէն կ'երթար ամբոխին,  
Եկաւ զարկաւ յաղթեց, դատ արաւ ռխին,  
Ըսպաննեց իշխանն ու քաղաքն ալ առաւ,
- 960 Բազում գանձ ու գոհար կորզեց աւարաւ:  
Մի մեծ ամբոխ եկաւ յարեցաւ իրեն,  
Քաղաքէն դէպի լեռ խուժեց համօրէն:  
Գագաթան մօտ դըղեակ մի շինեց ամուր.  
Իրեն հետ միացաւ քաղաքըն համուռ:
- 965 Երկաթէ մի դուռ ալ անցուցին վըրան,  
Թէ՛ մարտկոց եղաւ նա թէ՛ բընակարան:  
Մի ակ կ'ելլէր սարէն թափէր ի ստորէջ,  
Բախտով այն պարըսպին զետեղուած էր մէջ.  
Բոլորին մի պատնէջ քաշեց շըրջապատ,

- 970 Որուն աչք բընաւին չը չափեց գագաթ:  
Երբ նեղ եկաւ որդին նաև այն սընտուկ,  
Քարէ մի աւազան շինեցին յատուկ,  
Երբ օդէն բաւական տաքցաւ կիր ու քար,  
Բերին հանգուցին հոն որդը մեղմաբար:
- 975 Այնպէս էին կարգած որ առտուն ամէն,  
Պահապան մի կուգար Հաւթուատի կողմէն  
Մի մեծ կաթսայ բըրինձ կ'եփէր կը բերէր,  
Կը լափէր գիրուկ որդն, այս էր նորա կեր:  
Բոլորեցաւ այսպէս մի քանի տարի,
- 980 Խոշորցաւ որդն եղաւ մի փիղ վիթխարի:  
Մի ժամանակ այսպէս որ անցաւ վըրան,  
Հաւթուատ՝ անուն կոչեց այն տեղւոյն՝ կըրման.  
Եւ այն ազնիւ ազջիկն որդի հոգատար,  
Հայրը կարգեց զօրաց նորա սպասալար:
- 985 Պաշտօնեայ կարգեցին դըպիր ու վէզիր,  
Որդը կ'ուտէր կաթ, բրինձ, մեղր ամէն ի ժիր.  
Հաւթուատ ըՍպահապետ էր դըրան առաջ,  
Այն որ դատ դատաստան կ'ընէր այնչափ շատ,  
Կըրմանէ արշաւեց մինչ ի Չինաց ծով,
- 990 Ծածկեց համակ ծովու երեսը զօրքով:  
Եօթ որդուցը հետ կար բիւր սուսերավար  
Եւ և զէնք բազում և գանձ բաւարար:  
Ամէն այն թագաւոր, թէ ելլէր ի մարտ,  
Որդին սահմանաց մօտ ի մի ակընթարթ,
- 995 Լըսելով բոլոր այն զըրոյցները հին,  
Ջօրքով սարսափահար կը ջարդուէին:  
Այնպէս եղաւ դուռը Հաւթուատին հըզօր,  
Որ հոգն ալ չէր իշխեր մօտ փըչել անոր,  
Մի հահագին պարիսպ, մէջը զօրք ու գանձ,

1000 Հողմին ալ չէր ի տար ազատ դարձ ու անց:

— )•( —

Արտաշի պատերազմը Որդի հետ

և անկէ յաղթուիլը

- Արտաշիրին երբոր ականջը եկաւ  
Բոլոր այս զըրոյցներ տակաւ առ տակաւ,  
Քաշեց Հաւթուատի վրայ քաջ զօրապետն այն  
Իւր քաջաբախտ ու գոռ զօրքը նոյն հետայն:  
1005 Հաւթուատին երբ հասաւ ականջին այս բօթ,  
Բընաւ իսկ իւր սըրտին չը մըտաւ շքփոթ:  
Դարան դըրաւ լեռան մի խորշը զանխոււ,  
Ինք գիմեց ի ճակատ բանակաւ, անդուլ:  
Երբ տաքցաւ պատերազմն, իրար անցան զօրք,  
1010 Լախտով ու տապարով չափուէին զինուորք:  
Դուրս թըռաւ այն ջոկատն որ էր ի քըմին,  
Մութցաւ յանկարծ երկիր՝ հըզօր բանակին:  
Որոշել ձեռք ու ոտք դարձաւ անհընար,  
Ձեռքերը կ'ըսէիր թուլացան ի սպառ:  
1015 Այնչափ լեցան դիով դաշտ ու սար ու ձոր  
Որ յոգնած էր յաղթողն ի ջարդ ու կոտոր,  
Ով որ ուզմի դաշտէն փախաւ մազապուր,  
Տարաւ Արտաշիրին ըշտապաւ այս լուր:  
Երբ լըսեց մեծանուն Արտաշիր այս գոյժ,  
1020 Այս աւերն ու աւար եւ այս ապաժոյժ,  
Տըխրեցաւ յոյժ, իսկոյն կազմեց նոր բանակ,  
Լիացուց ոռճիկ ու զէնք առ հասարակ.

- վազեց արշաւասոյր վերայ Հաւթուատի,  
Երկինքն էր հասեր գլուխն այն չարազատի:  
1025 Փութացուց Ն'ամրոցէն գանձ ու զէնք առատ,  
Բանի տեղ չը դըրաւ լաշկար ու ճակատ:  
Մեծ որդին հեռուն էր օտարութեան մէջ,  
Երբ իմացաւ թէ հայրն ունի ռազմ ու վէճ:  
Չառաւ հանգիստ, դադար, նինջ ու կերուխում,  
1030 Նաւեց ջուրին այս կողմն ըշտապաւ բազում:  
Շահոյ անուն կըրէր այն ամբարտաւան,  
Չառադէմ, չարիմաց, վատ ու անպիտան:  
Նաւէն եկաւ շիտակ Հաւթուատին ի տես  
Ուրախացաւ հօր սիրտն այնու մեծապէս:  
1035 Աջ թեւի բանակին զանի կարգեց դէտ,  
Նա եղաւ կարգադիր և ըՍպահապետ:  
Կազմեցին երկուտեք բանակներ ճակատ,  
Վառեալ ի զէն, ի քէն, գանձերով առատ:  
Մի ակնարկ որ ձրգեց արքայն Արտաշիր,  
1040 Ծերացաւ իւր առոյգ սիրտը վըշտակիր:  
Երկու կողմէն առաւ զօրքը կարգ ու շարք,  
Ծագեցաւ արեւ ու տապացաւ աշխարհք:  
Երբ մեծ գոսը թընդաց փրղի վերեւէն,  
Մարդիկ ուշից ընկան երկմըղոն տեղէն:  
1045 Գոռաց փող կովադում\* և գալար արոյր.  
Ժըխոր, չըփոթ լըցուց աշխարհ ի պարոյր:  
Գետինը կը սարսէր պայտ ու գամի տակ,  
Օդն առած էր դրօշից գոյն լալ ու սուտակ:

---

\* Կովու պոչի ձևով, դ ու մ արմատէն որ թէև առանձին  
գործածուած չէ, այլ իւր գոյութիւնը հաստատուած է  
դ մ ա կ կազմութեան մէջ:



- Շաչ շառաչ լախտերու, սաղաւարտներու  
1050 վանեց երկինքն ի բաց, երկիրէն հեռու:  
Քանդէին օդաչու երիվարք գետին,  
Դար ու դաշտը\* ծածկեց անգլուխ մարմին:  
Այնպէս էր փոթորկած Հաւթուատի լաշկար  
Որ ասէիր ծովն էր ի ծովի հողմավար:  
1055 Խըռամբ զօրաց էր դաշտն այնքան անթափանց  
Որ մըժեղ ու մըրջիւն չէին գըտներ անց:  
Այսպէս շարունակեց մինչ իրիկուան մուտ  
Եւ գիշերն ըզգեցաւ իւր վերարկուն մութ:  
Հաւաքեց Արտաշիր զօրքը ցիր ու ցան,  
1060 Մի մեծ լիճ կար ետնն ուր բանակեցան:  
Երբ դիպակ ժանգառ-րանգ\*\* եղաւ համակ սեաւ,  
Ցայգապահք երկուտեք շրջէին կարգաւ,  
Շահին զօրաց հատաւ ուտեստի պաշար.  
Կապած էր անօրէնն ամէն ճանապարհ:

—)•(—

Մեհրակ-Ջահրոզմիհն Արտաշիրի  
տունը կողոպտելը

- 1065 Ջահրումի մէջ մի մարդ կար վատազգի շատ,  
Որոյ անուն Մեհրակ էր Անուշագատ:  
Երբ իմացաւ նա չուն Շահ-Արտաշիրի,

---

\* Նոյնպէս ալ դարը որ ծառի մի ուրիշ ձևն է,  
պահուած է դարաստանի մէջ և կը պատասխանէ  
պարսկերէն դարու դրախտի:

\*\* Բոլորովին հայապարսիկ է այս բացատրութիւնը զոր  
Թարգմանելու իսկ հարկ չ'տեսանք: Այսպէս շատ տեղեր:  
Հոս երկնից կապուտակ գոյնին մթնալուն կ'ակնարկէ:

- Եւ նորա նահանջելն առ ափըն ջրրի,  
Եւ համբարի սպառելն ի մէջ բանակի,  
1070 Եւ անցքերու կապուելն ալ շուրջանակի  
Խոյացաւ պաշարել պալատը Շահին,  
Ժողովելով զօրք անթիւ ի ճանապարհին.  
Աւերեց դանձը, բան չը թողուց իսկի,  
Զօրաց բաշխեց թագեր՝ քրսակներ ոսկի:  
1075 Երբ իմացաւ արքայն Արտաշիր զաղէտ  
Այն լրճափին՝ ուր էր, տըրտմեցաւ յաւետ.  
«Իմ սեփական, կ'ըսէր տուն չը յարդարած,  
Օտարին ինչո՞ւ ես եղայ կըռուամած»  
Վըզուրկ հրամատարներն ուզեց իւր ատեան,  
1080 Մեհրակէն նոցա շատ եղաւ ամբաստան:  
«Ի՞նչ կը խորհիք, ըսաւ, դուք, ո՞վ զօրավարք,  
Որ այսպէս դառն ելին մեզ այս պատահարք:  
Կեանքի դառնութեան շատ առած էի համ,  
Բայց չը կար այս Մեհրակ հաշուի մէջ անգամ»:  
1085 Չայն բարձին յայնժամ պետք, ըսին. Տէր Արքայ,  
Քո աչեր չը տեսնեն բընաւ թէ չար գայ:  
Թէ մի Մեհրակ ի գաղտ թըշնամի է քեզ,  
Ինչո՞ւ խաւար կուգայ քեզ աշխարհ այսպէս:  
Հըզօր ու մեծ ես դու, աշխարհ քեզ հըլու,  
1090 Մեք քո ծառայք, ահա պատրաստ մեռնելու:

\* Հրաման ըրաւ, շրտկեցին խան ու սեղան,  
Գինի բաժակ երգ ու նըլագ կազմեցան.  
Մի քանի գառ դըրած էին դէս ու դէն,

---

\* Ինչպէս որ խոստացած էինք, այս կէտէն սկսեալ չա-  
փը փոխեցինք 4-4-3 ի:

- Բոլորեցան շուրջանակի որ ուտեն.*
- 1095 *Երբ Արտաշիր հացն առաւ որ տայ ի կուռ,  
Թըռաւ յանկարծ վերէն մի սլաք սայրասուր,  
Մըխեցաւ խոր ի փոք գիրուկ գառան նետ,  
Մըխըրճեցաւ խըրեցաւ խոր նա անհետ:  
Աւագանին, փորձ՝ իմաստուն՝ ուղմազեկ,*
- 1100 *Ձեռք քաշեցին միանգամայն ահաբեկ.  
Արին գընաց սըրտէն յայնժամ մէն մէկուն:  
Քաշեց հանեց մէկը խըրեալ նետն ի բուն.  
Տեսան որ կար վըրան գըրուած մի տող գիր.  
Կարդաց անի մէկն որ քիչ շատ էր գըպիր.*
- 1105 *Գըրուած էր այն Պահլաւաբառ և այսպէս.  
Թէ «Ո՛վ արքայ, քաջ իմաստուն, կը լըսես,  
Քեզ այս սըլաքն եկաւ աստի, ամրոցէն  
Որ չընորհիւ Որդի անքոյթ կայ և շէն:  
Դէպ Արտաշիր թէ ուղղէի ես այս նետ,*
- 1110 *Խըրուած էր ցարդ փետրոյ մինչեւ վերջակէտ:  
Ձը վայլէր բնաւ թէ Անոր պէս մի արքայ  
Կործանելու Որդն ի գուպար ի մարտ գայ:»  
Երբ վերջացուց գըպրապետն առ Արտաշիր  
Ինչ որ էր այն նետին վըրայ գըրուած գիր,*
- 1115 *Եւ թէ խըտրոցն երկու փարսախ ամրոցին  
Երբ իմացան զօրապետներ սոսկացին:  
Իւրաքանչիւրն յերկնից օճան և չընորհ  
Խնդրեց երկրի Շահին համար սըրտէ խոր:*

—)•(—

*Արտաշիր կ'իմանայ Որդի պատերազմին  
ձախող ելքը եւ հնարք մը գտնելով  
կ'սպաննէ զայն:*

- 1120 *Շահ մըտատանջ կայր ի սըրտէ ցայգ համակ,  
Հազիւ լուսնի տեղն էր անցեր արեգակ,  
Վերցուց իսկոյն իւր բանակն այն լրճափէն,  
Փախաւ ինկաւ փարսի կողմեր խուճապէն:  
Որդի սակայն պընդեցաւ զօրք նոցա զհետ,  
Կըտրեց անոնց առջեւ ամէն արահետ,*
- 1125 *Գետին փըռեց ո՛վ որ անդ կար անուանի,  
Շահը զերծաւ ընկերաց հետ մի քանի:  
Գոռաց ամբոխն ետեւէն — «Որդ, քո է բաղդ,  
Կեցցէ պայծառ գահը Որդին մեր անյաղթ»:  
Զարմանք գոչէր ամէն մարդ առ հասարակ.*
- 1130 *Թող այս լինի ամենուն ևս օրինակ:  
Միւս կողմէն Շահ կ'ըշտապէր սիրտ ի խըռով,  
Դարուփոսներ ելեւէջներ կըտրելով.  
Հեռուէն մի շահաստան զարկաւ աչքի.  
Քըչեցին շուտ ձիանն այն տեղ գայլակի.*
- 1135 *Երբ եկաւ մօտ, տեսաւ որ մի տան առաջ,  
Երկու կըտրիճ կայ օտար ու անճանաչ:  
Կեցաւ այն տեղ դըրբան առջև մի պահիկ,  
Հարցուցին այն երկու ազնիւ պատանիք.  
— «Ուտի՛ կուգաք ժամուս այսպէս տարադէպ*
- 1140 *Փոշեթաւ ու մըտահոգ ու ճեպ ի ճեպ»:  
Ըսաւ Արքայն.— «Ասկէց անցաւ Արտաշիր.  
Շըփոթած մենք, մընացինք ետ, տար ու ցիր:  
Հաւթուատ որդէն կը փախչէր նա փոյթերագ,  
Եւ այն զօրքէն վատատոհմիկ անճարակ»:*

- 1145 Խոցեցաւ սիրտն այն պատանեաց կարի յոյժ,  
Նոցա հոգին պատեց թախիժ՝ վիշտ ու յոյզ.  
Վար իջուցին երիվարէն զայն շուտով,  
Դըրուատելով ներբողելով օրհնելով:  
Պատրաստեցին գեղազուարճ մի տեղի,  
1150 Դըրին առաջ խան, համադամ բարելի,  
Նըստեցուցին բոլոր քաջերն ալ իր հետ,  
Ջոյգ պարմանիք կային ի սպաս կէտ առ կէտ.  
Ասացին բարձր ի ձայն .- «Ո՛վ դու քաջազուն,  
Վիշտ ու բերկրանք չեն բընաւ միշտ մընայուն.  
1155 Ի՛նչ օգուտ, տես, տարաւ Ջոհակն\* անօրէն  
Արքայական իւր այն գահէն համօրէն,  
Կամ չարամիտն Աֆրասիաբ որմէ միշտ  
Թագաւորաց ամենուն սիրտ կըրեց վիշտ.  
Կամ ըՍկանդար որ երեւցաւ նոր ու նոր  
1160 Եւ չը թողուց երկրի վըրայ թագաւոր.  
Կորան բոլորն ու բայց մի վատ անուննին,  
Չը մնաց այլ ինչ, ոչ ալ երկինք տեղ ունին:  
Չը մնար անշուշտ Հաւթուատին ալ վատազգի.  
Նա ալ ընդ փոյթ իւր վախճանին կը համնի»:  
1165 Ասոնց խօսքէն բացուեցաւ սիրտն Արքային,  
Որպէս մի վարդ դեռափըթիթ գարնային:  
Այն սըրտաշահ մարդոց խօսքէն դուր ըզգաց,  
Յայտնեց յայնժամ զինքն ու գաղտնիքն ըրաւ բաց  
Թէ «Սասանայ ես եմ որդին Արտաշիր.

---

\* Որ և Դահակ, Աժի-Դահակ, Աժդահակ որ օտար իշխան լինելով բռնակալած էր բուն պարսիկ Ֆէրիդունի գահը, վասն որոյ եւ անիծիւք կը յիշուի մինչեւ ցայսօր:

- 1170 Հիմա խորհուրդ մի պէտք է ինձ օգտալիր.  
Ի՞նչ ընել այս Որդին ու այս Հաւթուատին.  
Վերնայ երկրէն անունն ու ազգն այն վատին»:  
Երբ Իրանայ մերկացաւ Շահն իւր գաղտնիք,  
Խոնարհեցան, պագին երկիր պատանիք,
- 1175 Ըսին — «կեցցես յաւերժ, Արքայդ բարեփառ,  
Հեռի քեզմէ չար ու փորձանք հեռի 'սպառ.  
Մ'ենք հոգւով ու մարմնով ահա կամք գերի,  
Դու միայն ողջ՝ անասան կաց յաշխարհի:  
Հարցումներուդ տանք պատասխան քեզ ուղիղ
- 1180 Որ դու գըտնես ինք քո ելք՝ ոահ ու շաւիղ:  
Դու այս մարտի մէջ Որդի ու Հաւթայ հետ,  
Լաւ չես աներ թէ չը շեղիս ճամբայէդ.  
Մի ամուր տեղ ունին նոքա սարն ի վեր,  
Ուր Որդն ու գանձ ու շատ մարդիկ են դըրեր,
- 1185 Քաղաքն առաջ, ետեւը ծով, իսկ սարին  
Գազաթը բերդ և վերելք յոյժ դըժուարին:  
Սա այն որդն է Ահրիմանայ ուղղածին,  
Տիեզերաց Արարչին ալ թըշնամին.  
Թէպէտ և որդ կ'ըսեն սակայն մորթին տակ
- 1190 Մի դեւ կայ չար՝ խաղմասէր ու բոցկըզակ»:  
Երբ այս խօսքերն անկէ լրսեց Արտաշիր,  
Բողորն անկեղծ՝ սըրտապարար՝ սիրալիր,  
Ըսաւ.— Այո՛, պէտք է մի գործ ընենք մենք.  
Չախող՝ աջող՝ ազ ձեզի հետ ընկեր ենք:—
- 1195 Տըղաքն յայնժամ մի պատասխան տըւին քաջ  
Որ այն ուշիմ Շահին եկաւ սըրտին հաճ:  
Ըսին.— Ահա մենք քո ծառայք յոտին միշտ,  
Ցուցանել քեզ որն է բարի ելքը ճիշդ:—  
Գոհ և ուրախ այս խօսքերէն՝ սուրաց Շահ,

- 1200 Արիասիրտ վըրէժխընդիր և վըստահ:  
Երբ մեկնեցաւ անտի Արքայն երկրակալ,  
Ընկերացան նըմա երկու տըղաքն ալ:  
Վըճիտ հոգևով և ամփոփ նա գընայր ոահ  
Մինչեւ եկաւ հասաւ Արտաշըր ի խորայ:
- 1205 Խըմբըւեցան ըսպայակոյտ Նորա շուրջ,  
Աւագորեար մեծախորհուրդ, աչալուրջ:  
Մի քիչ հանգեաւ, ոտճիկ բաշխեց լիառատ.  
Յետոյ չըւեց դէպ ի Մեհրակ Նուշագատ:  
Եւ զի Մեհրակ չէր իշխած գալ ուզմի տեղ,
- 1210 Աշխարհ անոր մութ բերաւ ու թանգ ու նեղ:  
Երբ մօտեցաւ Ջահրում՝ Արքայն ի հեռուստ,  
Փութաց Մեհրակն աներես՝ լիրբ ի թաքուստ,  
Բայց թագաւորն անողոք՝ խիլ տըւաւ քաջ,  
Մինչեւ կալան բերին ժըպիրհն իւր առաջ:
- 1215 Կըտրեց Հընդիկ սըրով կառափն այն ժըտուն,  
Նետեց անսար իրանն ի հուր ճարճատուն:  
Ամէն ով որ անցուցին ձեռք տոհմէն այն,  
Ջարդուկոտոր բարձին իսպառ նոյն ժամայն,  
Բայց միայն մի աղջիկէ որ կաց թագուն,
- 1220 Որչափ ալ զայն խուզարկեցին տունէ տուն:  
Ապա վերցուց բանակն անտի փութապէս,  
Վազեց Որդի վերայ մարտիւ ի հանդէս.  
Երկոտասան հազար հեծեալ զինեց շուտ,  
Բոլորն ալ գոռ քաջամարտիկ և հըմուտ:
- 1225 Երբ ցիր ու ցան զօրքն եկաւ խումբ ի ժողով,  
Տարաւ զանոնք երկու լերանց մէջ փութով:  
Մի մարդ կար հոն փորձ ու խոհեմ, Շահրիկիր  
Սալարներէն մին արքային Արտաշիր.  
Դարձաւ արքայն դէպ ի այն քաջն ու ասաց.

- 1230 — Լարէ ուշդ ու ըզգուշաւոր դու աստ կաց,  
Գիշեր ցերէկ մարդ հանէ միշտ հետ ըզհետ,  
Ձիաւորներ փորձ՝ աշալուրջ՝ ուսհադէտ.  
Պահապաններ՝ դէտեր կարգէ փոյթ ի փոյթ,  
Տիւ ու գիշեր պահպանել զօրքն ի յանքոյթ,  
1235 Մինչեւ որ ես որոնեմ լաւ մի հընար  
ինչպէս ըրաւ քաջ իմ նախնի Սպանդիար:  
Թէ ցերէկին մի ծուխ տեսնեն օդն ի վեր,  
Կամ արփաշող բոց նըշմարեն ի գիշեր  
Գիտցէք յայնժամ թէ վերջ առաւ Որդի փայլ,  
1240 Անցած է բախտն ու յաջողուած նորա այլ:  
Ութ հոգի Կտրեց այն քաջերէն իւր ընկեր,  
Կորովալիր, պատերազմիկ առիւծներ.  
Իսկ այն երկու Կնկերքն ի խորհուրդ և ի դաւ,  
Ոչ իսկ հողմի շըշընչեցին ինչ բընաւ:  
1245 Ընտրեց առաւ Շահը գանձէն գոհար շատ,  
Դիպակ՝ դենար և այլ բազում ինչ առատ:  
Խելքով ի գործ դըրաւ չեղած մի հընար:  
Երկու սընտուկ լեցուց արոյր ու կապար,  
Մէկ մ'ալ արոյր կաթսայ դըրաւ բեռին մէջ,  
1250 Քանզի ճարպիկ էր նա յոյժ իւր դերին մէջ.  
Տարուելիքներն որ նա չըտկեց համօրէն,  
Տաս հատ ալ էջ պահանջ ըրաւ Սալարէն.  
Նշպանի պէս հագաւ մեկնոց մի խոշոր,  
Մինչդեռ ոսկի արծաթ էր բեռն իւր բոլոր.  
1255 Սիրտն ի տագնապ, միտք ի յերեր, ալեկոծ,  
Մեկնեցաւ զօրքէն թըռաւ շոյտ դէպ ամրոց:  
Այն շինական երկու տըղաքն որ մի օր,  
Ասպընջական էին իրեն փառաւոր,  
Ջուկեց զանոնք խմբի մէջէն, առաւ հետ,



- 1260 Քանզի էին թէ՛ բարեկամ թէ՛ բանգէտ:  
վերելքի ծայրն երբ մօտեցան ամրոցին,  
Սարին վերայ կեցան մի շունչ քաշեցին:  
վաթսուն հոգի՝ սպասու Որդին էր գործօն,  
Ոչ մին երբէք կը թերանար ի պաշտօն.
- 1265 Մէկը տեսաւ, ձայնեց հեռուստ «Ո՞վ էք, ո՞վ.  
Տեսնեմ ինչ կայ սընտուկին մէջ յապահով:  
Պատասխանեց Արքայն. — «Ամէն տեսակ բան  
Առեր եմ հետս. ահա բեռին մէջ լըման:  
Ճոխ արդուզարդ, ոսկի արծաթ և գոհար,  
1270 Մետաքսեղէն, ընտիր դիպակ ու դենար:  
Խորասանցի վաճառական մի եմ ես,  
վաստակաբեկ, մըշտաչարչար, վերջապէս՝  
Տէր եմ այսօր, Որդի շնորհիւ, շատ ընչից.  
Եւ այժմ եկայ ուխտի Նորա գահոյից:
- 1275 Արժանի է որչափ յարգեմ՝ յարգանաց,  
Անոր բախտովն է իմ բոլոր յաջողուած:» —  
Երբ իմացաւ պահակը թէ ինչ է բան,  
Փութաց բացաւ դուռն անկասկած՝ անվարան:  
Երբ պարըսպէն բեռները ներս մուծեց Շահ,  
1280 Գործին յայնժամ ըսկսաւ տալ ելք ու ոահ.  
Բացաւ իսկոյն բեռին բերանն Արտաշիր,  
Մատոյց անոնց մի մի ընծայ յարգալիր.  
Գետնի վերայ գազի մի փոռց արաւ բաց,  
ինչպէս կ'անեն ծառայք, ապա վեր եկաց,  
1285 Քակեց կապերն, հանեց հակէն բանալի,  
Գըտաւ բաժակն, առաջարկեց գինւով լի:  
Ով որ այն օր պիտի տանէր Որդի կեր,  
կաթ ու բրինձ որ նորա միշտ սնունդն էր,  
Գըլուխ դարձուց բաժակէն թէ Չէ օրէն

- 1290 Որ արբենայ, զի կարգն այն օր էր իրեն:  
Երբ նա նըստաւ, ոտք ելաւ Շահն ու ասաց.  
— «Ես բազում կաթ և բրինձ հետս եմ բերած.  
Թէ թոյլ տայ ինձ Աւագ Տեսուչն երեք օր,  
Որ ըստ ըղձիս, ես տամ Որդին կեր ու խոր,  
1295 Պարծանք մի մեծ պիտի լինէր ինձ համար,  
Եւ նորա 'սողէն բախտ և օգուտ անհամար:  
Դուք երեք օր զըւարճացէ՛ք, դուլ արէ՛ք.  
Երբ չորրորդին, աշխարհալոյս գայ արեգ,  
վաճառաստան մի շինեմ ես ընդարձակ,  
1300 Որոյ ճակատն այս պատերուն անցնի ծագ:  
Առտուր իմ գործ, գընորդ կ'ուզեմ վաճառքիս,  
Եւ որդին քովն ալ բարձրացումն իմ յարգիս»:  
Հասաւ նա իւր նըպատակին այս խօսքով  
Ըսին — Լան, դու սպասաւորէ Որդին քով:—  
1305 Ամէն գոյնի մըտաւ ճարպիկն իշապան  
Մինչեւ առին բաժակներն ու բազմեցան,  
Խըմեցին լաւ ու արբեցան ինկան հոն,  
Որդէն անցան որթի բերքին ի պաշտօն:  
Երբ ուշաթափ տեսաւ արքայն զանոնք լաւ,  
1310 Հիւրամեծար հին ընկերաց հետ եկաւ.  
Բերին արճիճն, արոյր կաթսան հրապարակ,  
Օր ցերեկով վառեցին մեծ մի կըրակ,  
Երբոր եկաւ ժամն ուտելու Որդի կունդ,  
Եոցած արճիճն էր անդ պատրաստ ի սընունդ:  
1315 Բերաւ կունդին առաջ կապարն եռ ու ձոյլ,  
Տընկեց գըլուխն ի վեր զանգուածն հըսկայ թոյլ  
Հանեց լեզուն ծընծղայակերպ գոգուր,  
Ինչպէս բըրինձ կերած ատենն էր սովոր:  
Պատանին շուտ վաթեց հեղուկն իր կոկորդ,

- 1320 Թուլցաւ ինկաւ իսկ և իսկ այն գիրուկ որդ:  
Ճիչ մը ելաւ կոկորդէն՝ խուլ և ահեղ,  
Դըզըրդեցաւ շուրջանակի տուն ու տեղ.  
Պատանեաց հետ թուաւ Արտաշիր որպէս հողմ՝,  
Ածին սուսեր՝ աղեղ ու լախտ ամէն կողմ:  
1325 Ծառաներէն, արբեցած ու 'նդարմացած,  
Ոչ ոք անոնց ձեռքէն ազատ ողջ մընայ:  
Ծուխն ելաւ վեր աշտարակէն նոյն հետայն,  
Քաջերէն մին ըՍպային ցոյց տըլաւ զայն.  
Վազեց պահակն հեւ ի հեւ առ Շահրիկիր,  
1330 Թէ յաղթական ելաւ արքայն Արտաշիր:  
Առաւ Սալարն ըսպայ ու զօրք փութաջան,  
Եկաւ ամրոցն, եղաւ Շահին յանդիման:

—)•(—

### Արտաշիրին

#### Հաշրոշար սպաննելը

- Երբ այս անցից եղաւ Հաւթուատն իրազեկ  
Կոտորեցաւ սիրտն, հառաչեց խոր՝ վըշտաբեկ,  
1335 Փորձեց ամրոցն ի ձեռք բերել վերըստին,  
Սլացաւ արքայն, ելաւ վերայ պարըսպին,  
Հաւթուատ ի զուր աշխատեցաւ ելլել վեր,  
Առիւծի ոտքն արդէն այն տեղ էր կոխեր:  
Եւ այն կողմէն բանակն հասաւ լեռան պէս,  
1340 Որդի գրոհին բեկաւ յայնժամ սիրտն ի տես:  
Չայնեց վերէն Շահրիկիրին Արտաշիր.—  
Յառաջ տար դու մարտըդ ո՛վ քաջ, մի կասիր,  
Եթէ խըռան մէջէն Հաւթուատ զերծաւ ողջ,

- Հով մնաց քեզ, կորաւ վաստակ քո ամբողջ:
- 1345 Հալած արճիճ թափեցի ես Որդի փոր,  
Մըթնեց արեւն իջաւ գոռոզ քիթն անոր:  
Ջօրքը լըսեց արքային ձայնը վերէն,  
Դըրաւ երկաթ սաղաւարտներն համօրէն,  
Եւ սիրտ առած հորդան տըւաւ մոլեգին,
- 1350 Հանել լուծել թըշնամիէ զվըրէժ հին:  
Հողմը սաստիկ փըչեց Որդին զօրաց կոյս,  
Բըռնըւեցաւ Հաւթուատ անճար և անյոյս:  
Նոյնպէս Շահոյ որ նըմին էր հաւասար,  
Եւ որ երէց որդին էր ու զօրավար:
- 1355 Փութաց իջաւ ամրոցէն վար Արտաշիր,  
Եւ հետիոտ եկաւ կեցաւ Շահրիկիր \*  
Մի երիվար բերին ահեղ՝ ոսկեսանձ,  
Հեծաւ վըրան խոսրով արքայն փառապանձ,  
Հրաման ըրաւ, բերին իսկոյն երկու ձող,
- 1360 Տընկեցին անդ ծովափն ի վեր տողն ի տող,  
Հանեց վերայ երկու չարերն յոռեմոյն,  
Եւ արթընցուց քունէ սիրտը թըշնամոյն,  
Բանակէն դուրս թըռաւ արքայն, քաշեց նետ,  
Ջարկաւ երկուքն ալ թաւալեց հետ ըզ հետ,
- 1365 Աւար բաշխեց զօրականաց ինչ որ կար,  
Ջօրքը լըցաւ հարըստութեամբ անհամար:  
Ինչ որ գըտան մէջ ամրոցին թանկագին:  
Բերին դըրին Շահին առջեւ խընդագին:  
Մէջէն Արքայն ինչ որ եկաւ իրեն դուր,
- 1370 Ջատեց խըրկեց Արտաշիր-խորրայ ի Դուռ.

---

\* Այսպէս շատ տեղ միևնոյն յանգերը կրկնուած կը տեսնենք  
Ֆիրդուսիի քով:

- Լեռան վըրայ հաստատեց մի ատրուշան,  
Նորոգեցան տօնք Սաղայ և Մեհրիկան.  
Յանձնեց երկիրն ու թագ ու գահն այն բոլոր,  
իւր հիւրընկալ հին ընկերաց բախտաւոր:
- 1375 Չըւեց անտի, յաղթող՝ ուրախ և զուարթ,  
Հաստատելով Փարսի մէջ զատ՝ կարգ ու զարդ.  
Երբ խաղաղցուց մարդ՝ անասուն՝ կատարեալ,  
Չըւեցուց զօրքն, ի Շահրիզոր խաղալ գալ:  
Մի մասն յըղեց կըրման, տալով զօրավար,
- 1380 Թագի գահի արժանաւոր մի լաւ այր,  
Ապա Տիզրոն խաղաց արքայն մեծանուն,  
Յետ թըշնամւոյն անելոյ բախտ սարնըկուն:  
Այս եղած է կարգն աշխարհիս անցաւոր.  
Կը ծածկէ միշտ քենէ գաղտնիքն իւր ի խոր:



**ԴՐՈՒԱԳ Գ.**

**Գահակաշտրիւն Արուայրի  
ի Բաղդադ**

- 1386 Բաղդադ եկաւ, նըստաւ ի գահ փիղժանի,  
Դըրաւ ի գլուխ փառահեղ թագն արժանի,  
Ածաւ գօտի, առաւ ցուպն արքայական,  
Նըստաւ ի մէջ մի հոյակերտ պալատան.  
Շահինչահ յայնժամ գոչեցին միաձայն,  
1390 Ձը Խըտրելով հին վըշտասպէ բընաւ զայն:  
Երբ դըրաւ թագն իշխանական փառազարդ,  
Այսպէս գողաց գահէն յաղթող ու զըւարթ.  
— «Արդարութիւնն է աշխարհիս մէջ իմ գանձ  
ի՛մ արդեամբս է նոր այս աշխարհ փառապանծ.  
1395 Ոչ ոք կըրնայ կապտել իմ այս գանձ ինէ,  
Չար կը հասնի անոր՝ ո՛վ որ չար կ'ընէ.  
Թէ գոհ մընաց Ամենակալն ըՍտեղծող,  
Ձը զըլանար ինձմէ անշուշտ այս սե հող:  
Աշխարհ լըրիւ իւրով ինձ կայ ապաստան,  
1400 իմ ճանապարհն է իրաւունք՝ դատաստան.  
Ձը պէտք է որ պաշտօնակալ ոչ մի մարդ.  
Թէ հրամայող կամ թէ՛ հեծեալ քաջամարտ,  
Խըւէ երբէք զոք որ ի քուն կայ կարօտ.  
Կամ թէ չարերն իշխեն երթալ լաւաց մօտ:  
1405 Բաց է այս Դուռն ամենեցուն անխըտիր,  
Թէ՛ չարախոհ լինի նա թէ՛ համակիր»:  
-Գովեց Ժողովն, ասաց.- «Աղէ՛, Ա՛րքայ քաջ,  
Արդարութեամբդ աշխարհ լիցի բարգաւաճ:»

1410 *Ջօրք ուղարկեց ամէն կողմ առհասարակ,  
 Որ եթէ կայ թըշնամի ոք ըստահակ,  
 Ի կարգ բերեն այն գըլուխներն ապըստամբ,  
 Թէ ոչ քաշեն սուրը, գահու իրաւամբ:*

—)•(—

*Արտաշի և Արտաշանայ դստեր  
 մէջ տեղ անցած դէպքերը*

1415 *Երբ զԱրտաւանն ըսպաննեց Շահն՝ անցուց ձեռք  
 Նորա արեամբ բոլոր աշխարհք, տիեզերք:  
 Յետոյ նորա դուստրըն իրեն առաւ կին,  
 Որպէսզի ցոյց տայ իւր հօր գանձը Տիկին:  
 Արքայորդիք երկու փախան ի Հընդիկ.  
 Նըմանավիշտ տըւայտելով աստանդիկ:  
 Երկու միւսներն արքունեաց մէջ գըլին բանտ.  
 1420 Աչք ի հեղեղ, սիրտ յապաժոյժ կեցան անդ:  
 Երէց որդին ի Հընդիկ կայր ապաստան,  
 Գերահըոչակ քաջին անունն էր Բահման:  
 Մի մարդ փընտուեց սա, խելացի՝ բանիբուն՝  
 Երիտասարդ՝ խօսք հասկըցող եւ ճըկուն:  
 1425 Ձի հայրենի գահէն անմասն էր ինք, մերկ,  
 Բերաւ կըտոր մի թոյն տըւաւ նորա ձեռք.  
 Ըսաւ. —գընա՛ քըրոյրս մօտ ըսէ՛ շուտ.  
 —«Դու մի սպասեր թըշնամիէն մեզի գուլթ:  
 Երկու եղբայր ունիս Հընդիկ, դու յո՛ւշ աժ.  
 1430 Նըժդեհակից, համանըսեհ, համարկած.  
 Երկու միւսներն յարքայի կան արգելոց,  
 Ձիք հայր, որդիք կը հառաչեն նետախոց:  
 Դու որ այսպէս կը զըլանաս մեզ քո սէր,*

Generated on 2017-07-13 10:25 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1/cu58667180  
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-google

- Լաւ կը տեսնէ տիեզերաց վերին Տէր:
- 1435 Թէ իրանայ կ'ուզես լինել դու գըշխոյ,  
Թէ կը ցանկաս որ յիշուին գործք՝ արարք քո  
փութով առ այս հընդկական ժահրըն ազդու  
Միանգամից Արտաշիրին տուր այս դու:—  
Եկաւ բանբերն երեկոյեան մի պահին,
- 1440 Իրազեկեց արքայադուխտ Տիրուհին:  
Փըղձկեցաւ սիրտն իր այս եղբարց վիճակին,  
Բորբոքեցաւ տոչորեցաւ իւր հոգին.  
Առաւ մարդէն մեծագին այն հընդիկ թոյն,  
Որոշեց տալ գործին յաջող ելք իսկոյն:
- 1445 Դէպ եղաւ որ մի օր արքայն Արտաշիր  
Որսի ելաւ, զարկաւ մի հատ վայրի ցիւռ:  
Երբոր երկայն օրից անցաւ մի մեծ կէս,  
Նախճիրէն տուն դարձաւ արքայն փութապէս,  
Արտաւանի դրստեր եկաւ շիտակ մօտ:
- 1450 Իսկ լուսնագեղն առաջ վազեց Շահին ոտ,  
Բերին դեղին յակինթէ մի ըսկահակ,  
Լեցուն չաքար պիստակ ու ջուր սառնորակ,  
Թոյնը խառնեց չաքարի ու կասկի\* հետ,  
Յուսարով որ Բահման հասնի 'ր ըղձակէտ:
- 1455 Երբ ձեռքն առաւ բաժակը Շահն Արտաշիր  
ինկաւ յանկարծ թափեցաւ կասկն ի յերկիր.  
Դողաց Տիկինն արքայազատ միանգամայն,  
Յերկուա ընդմէջ հերձաւ ի սիրտ նոյնհետայն:  
Կասկած ինկաւ արքային սիրտն այդ դողով,
- 1460 Եւ պարայած երկնից անուէն խիթալով,  
Հրաման ըրաւ մի ծառային որ բերաւ.

---

\* Տես Կարնամակ եր. 108, Ծան. 111:



- իւր իսկ աչաց առջեւը՝ չորս հատ տան հաւ  
Տարին կասկին մօտը զանոնք՝ թողին բաց,  
վըստահաբար թէ տարապարտ է կասկած:
- 1465 Երբ կերան և անմիջապէս սատկեցան,  
Անմեղուժեան չը մնաց այլ ևս ապաստան:  
Հրաման ըրաւ լըրջախոհն այն մեծ Խոսրով  
Որ Մովսէստան մովպետ իշխան գայ իւր քով:  
Իրանայ մեծ Դաստուրէն հարց ըրաւ Շահ.
- 1470 -«Մի վատախոհ նըստեցընես թէ ի գահ,  
Փառաւորես պատուես այնչափ որ արբշիռ,  
Մինչեւ կեանքիդ ժըտէ լինել դաւադիր.  
Ի՞նչ պատուհաս կը սահմանես այն գիծին,  
Ի՞նչ հընար մեր ձեռքով գըտած պատիժին»:
- 1475 Պատասխանեց մովպետ. -«Ծառայ տիրասուն  
Որ ժըտէ չար նիւթել վեհիդ իսկ համբուն,  
Պարտ է կըտրել գըլուխն իսկոյն մեղապարտ  
Առանց ականջ տալու խրատ այլ թէ տայ մարդ»:
- 1480 Ըսաւ արքայն -«Արտաւանայ դու դըստեր  
Մարմինն ըրէ՛ որ այլ հոգին չը տեանէր»:  
Ելաւ մոգպետն, արքայադուխտն իւր առաջ,  
Ահով դողով և սիրտ ի խայթ՝ ի հառաչ:  
Ճամբան ըսաւ մովպետին. -Ո՛վ գերըզգօն,  
Ոչ քեզ այս օր կը մընայ և ո՛չ ինձ, օ՛ն.
- 1485 Թէ մեռցընել կամիս դու զիս անպատճառ,  
Սակայն թէ ես յըղի եմ, զայս դու յուչ ան:  
Թէ արժանի եմ ես արիւնս որ թափես,  
Կամ վերամբարձ փայտէ կախուիմ վերջապէս,  
Կայց սակայն մինչ լուսաշխարհ գալ մանկիկին,
- 1490 կը կատարես յետոյ զհրաման քո կըրկին:  
Սա այնպիսի գործ չէ որ իմ ձեռքէ գայ.

- Խոհեմը միշտ յիմարին կայ գերագահ\*:  
Մովպետը ետ դարձաւ յայնժամ Շահին քով,  
Պատմեց ամէն բան գլտակաւ ու տեղով:
- 1495 Արքայն ըսաւ.— «Մի տար ականջ դու բընաւ,  
Ըրէ՛ ինչ որ հրամայեցի քեզ կանխաւ»:  
Մովպետն ըսաւ ինքն իրեն — վնտ ժամանակ,  
Որ արքայէն հրաման ելլէ այս գունակ:  
Ամենու ալ կայ մեռնիլ, ծեր թէ մանուկ,
- 1500 Արտաշիրը չունի զաւակ իւր յատուկ,  
Թէ անհաշիւ ամեր ալ կեանք ունենայ.  
Թըշնամոյն է գահը երբոր մեռնի նա:  
Լաւ է ուրեմն որ այս անշահ գործին ես  
Մի լուծում տամ յարմարագոյն քաջապէս,
- 1505 Ազատեմ այս լուսինը ես այս մահէ,  
Հարկաւ մի օր զըղջում առնեմ և Շահէ.  
Կամ չէ, երբոր զատուի մանուկն ի մօրէ\*\*  
Կը կատարեմ արքայի խօսքն ինչ որ է:  
Մի տեղ չըտկեց անոր իր տան մէջ գաղտուկ,
- 1510 Պահպանելով զայն իւր անձին պէս յատուկ.  
Պատուիրեց իւր կընոյ թէ — Չեմ ներեր ես  
Որ այս կընկան՝ քամին ալ չընչէ երես:  
Եւ խորհելով թէ թըշնամիք յոյժ շատ կան,  
Բարի թէ չար՝ կարծիք յատուկ են մարդկան,
- 1515 Մի ճար\*\*\* անեմ որ չարախօսք իմ դաժան  
Չը կարենան պըղտորել ջուրն իմ ական:

---

\* Մովպետին առանձին մտածութիւնը լինել կը թուի այս:

\*\* Այսինքն ստինքէ կտրուի:

\*\*\* Խօսքը այսպէս պատմական երբորդ դէմքէն յանկարծ առաջինին փոխուիլը յաճախադէպ է պարսիկ և հայ հին մատենագրութեան մէջ:

- Առանձնացաւ կըտրեց հանեց իւր ձըւանք,  
 Խարեց կապեց ըսպեղանեց այն տեղուանք,  
 Չուամոհներն աղելով այնուհետեւ,  
 1520 Դըրաւ տուփի մը մէջ ծուխի պէս թեթեւ.\*  
 կընքեց այն տուփն անմիջապէս եւ ելաւ,  
 Երես դեղնած սիրտն ամբոխած և ի ցաւ:  
 Երբոր եկաւ երկնահանգէտ գահուն մօտ,  
 կընքածըրար տուփը հանեց դըրաւ հոտ,  
 1525 Ըսաւ Շահին թէ այս աւանդն հաւատչեայ,  
 Գանձապետին ի պահ տայ ինքըն արքայ,  
 Գըրուի վըրան թըւականն, օր ու ժամով,  
 Ուստին ինչպէսը՝ տեղն ի տեղ խընամով:  
 Մինչ ծընընդեան եկաւ հասաւ կէտն ու ժամ,  
 1530 Չը բացաւ նա գաղտնիքը հողմին անգամ:

—)•(—

Արտաշրի որդոյն Շարուրի ճնիյն Արտաշանի  
 դստերէն, և եօք տարի վերջը Արտաշրին  
 իմանալ և գայն ձանչնալը

- Արտաւանայ դատրէն ծընաւ մի սըղայ,  
 Խոսրովատիպ՝ զըւարթ՝ կայտառ երեխայ.  
 Տընէն ի բաց արաւ ամբոխը Դաստուր,  
 Եւ նորածինն անուանեց ինքը Շահբուր:\*\*  
 1535 Եօթը տարի թաքոյց մանուկն անյըչուկ,

\* Այս ծուխի պէս թեթեւ բացատրութիւնը կը գործածուի պարսկերէնի մէջ գործողութեան մը արագ կատարուիլը նշանակելու համար:

\*\* Որ ըսել է Արքայորդի:

- Տըղայ մ'եղաւ վեհ ու կըտրիճ՝ փառաշուք:  
Օրերէն մին, երբ մըտաւ ներս նոյն վէզիր.  
Տեսաւ արցունք կը թափէ Շահն Արտաշիր.  
Ըսաւ. — « Արքայ, յաւիտեան կեանց, ինչ է աս,  
1540 ինչո՞ւ յուզուած հոգևով այսպէս տըխուր կաս,  
Ամէն ինչ որ ցանկայիր՝ ել ի կատար,  
Թըշնամույդ դու գըլուին առիր զահէն վար.  
Գիներբութեան՝ զըւարճութեան ժամ է արդ,  
Ոչ թէ տըրտմիլ՝ լալ հոգայու տարապարտ.  
1545 Քո է լըրիւ եօթընբաժնեայ այս աշխարհ.\*  
Թէ՛ զօրք ունիս թէ՛ զահ և թէ՛ ճանապարհ»:  
Այսպէս անոր պատասխանեց վեհապետ. —  
«Ո՛վ դու աննենգ՝ խորհըրդապահ իմ մովպետ,  
Խաղաղացուց աշխարհը մեր սըրոյ ոյժ,  
1550 Հոգ՝ տառապանք՝ անբարութիւն քիչցան յոյժ:  
Տարիքս արդէն յիսուն և մէկ հաշուեց ամ,  
Մուշկը քափուր դարձաւ ու վարդը թառամ,  
Պէտք էր որ այժմ ունենայի մի զաւակ:  
Շընորհայի՛ բանգէտ ու ինձ օժանդակ:  
1555 Հայր անորդի՛ որդի անհայր է իրօք,  
Ձոր չը գըգուեր բընաւ երբէք օտար ոք:  
Ինէ վերջ իմ թըշնամույն այս գանձ ու թագ  
Ինձ կը մնայ քաշած վիշտս ու հողի տակ»:  
Մըտքէն ըսաւ ծերուկն ըզգօն խորամիտ.  
1560 Ահա եկաւ խօսելու ժամն ու առիթ:  
Ըսաւ. — «Արքայ, խոնարհաց դու սըրտաշահ,

---

\* Հին աշխարհագիրք աշխարհը եօթը բաժնի կամ մասի բաժնած էին, հ եւ թ ք է շ վ ա ր, որ և ցարդ կը դործածուի Արեւելեայց մէջ:

- Առատատուր, պայծառամիտ, գերագահ,  
Եթէ չնորհես ինձ, ի պարգեւ, իմ հոգին,  
Դարման անեմ ես Արքայիդ այդ հոգին»:-
- 1565 Ըսաւ Արքայն. - «Ո՛վ իմաստուն բիւրխըրատ,  
Ինչ կայ որ հոգ կ'անես հոգւոյդ համար շատ,  
Ըսէ գիտցածդ երկարօրէն անվեհեր.  
Քան իմաստնոյն զըրոյցն ինչ կայ գերիվեր»:  
Պատասխանեց Շահին դաստուրն արգաւոր.
- 1570 -«Ո՛վ իմաստուն՝ գերախորհուրդ թագաւոր,  
Մի տուփ տըւի գանձապահին ես յառաջ,  
Հրաման ըրէք որ բերեն զայն ձեր առաջ:  
Ըսաւ արքայն գանձապահին. -«Գընա՛ բեր  
Այն աւանդը որ կ'ուզէ հոս անոր տէր,
- 1575 Բեր տուր իրեն, տեսնենք ինչ է այդ տուփը,  
Թերևս ինէ բառնայ այս հոգն, այս ծուփը»:  
Գընաց բերաւ աւանդն իսկոյն գանձապահ.  
-«Ա՛ռ այդ ծրարն, յ'ն, դաստուրին ըսաւ Շահ,  
Ինչ կայ տեսնենք այդ տուփին մէջ, և թէ ան
- 1580 Ո՛ւմ կընի՞քն է որ դըրոյմած են վըրան»:  
Ըսաւ Դաստուր. -«Դա զուտ արիւնն է իմ ջերմ,  
Բունէն կըտրած ամուլք են ուր լինի սերմ:  
Դու իմ ձեռք յանձն արիր դուխտն Արտաւանի,  
Որ անկենդան դարձընեմ ես քեզ զանի:
- 1585 Չը մեռցուցի, տեսնելով որ յըղի էր,  
Վախցայ Անկէ որ կենաց կայ միակ Տէր:  
Խընայելով անձիս չեղայ հընազանդ,  
Կըտրեցի 'սկոյն զոյգ ձըւանքս ու դըրի անդ,  
Որպէսզի չարք լեզուագարել չառնեն ոյժ,
- 1590 Եւ մեղաց զիս ծովու մէջ խրել խորասոյգ:  
Եթ տարի է այսօր որ Քո պայազատ

- Քո դաստուրին մօտ կը մնայ գոհ՝ ազատ.  
Ոչ մի արքայ տեսաւ զաւակ այնպիսին  
Որպէս է նա, կարծես երկնից մի լուսին.
- 1595 Շարուր անուն տըւի անոր գըգուական,  
Որ իր բախտով խինդ ու բերկրանք տայ մարդկան:  
Մայրն ալ ողջ է, միասին կը բնակին,  
Նա ի սպաս կայ իւր փառատենջ զաւակին»:
- 1600 Այլեցաւ յոյժ աշխարհակալ մեծ արքայն,  
Եւ ըսկըսաւ խորհիլ մանկան վըրայ այն.  
Ապա գարձաւ դէպ ի դաստուրն՝ ըսաւ բաց.—  
«Այր դու խոհեմ՝ աշխարհատես, գերիմաց,  
Շատ ես քաշեր, կը տեսնամ, վիշտ, տառապանք  
Չեմ ուզեր որ յերկարեն այլ քո տանջանք.
- 1605 Գընա՛ հարիւր տըղայ գըտիր համանըման,  
Տարիք, գէմք ու լանջ ու հասակ և իրան.  
Բոլորն ալ նոյն հագուստն հագած մի սարաս  
Ոչ աւելի մէկըզմէկէ, ոչ պակաս:  
Բոլորը մէկ ճոկանի հան ի հանդէս,
- 1610 Գընտակ ճարէ, շուտ ուղարկէ՛ ասպարէզ:  
Երբ գան ի դաշտ բոլոր այս խումբ գեղեցիկ,  
Շարժին անշուշտ, ի տես որդւոյս, իմ աղիք.  
Վըկայէ սիրտս ասածներուդ ուղղութեան  
Եւ ճանչցընէ ինձ անվըրէպ իմ տըղան»:
- 1615 Եկաւ առտուն կանուխ դաստուր Շահառաք,  
Բերաւ բոլոր մանուկներն ի հրապարակ.  
Բոլորը մէկ ձև ու մէկ գէմք ու տիպար,  
Ջանազանեւ մէկը միւսէն չէր հընար:  
Դաշտի վերայ գոգ մի հանդէս կար ի դէտ,
- 1620 Շարուր իշխանն էր ամենուն դիտակէտ:  
Երբ սա մըտաւ կըրկէսին մէջ ճոկանաւ,

- Ամենէն շատ հեռու գրնտակը նա տարաւ:  
Եկաւ յայնժամ Արտաշիրն ալ դաշտավայր,  
իւր հետ առած ծեր ու գեռհաս քանի մ'այր.
- 1625 Երբ նայեցաւ դիտեց տըղաքն անըրչունջ,  
Քաշեց սըրտին խորէն մի անց ցըրտաշունչ.  
Մատով ցուցուց տըղաքն՝ ըսաւ մովպետին.—  
«Ասոնց հարկաւ մին Արտաշրի է որդին»:  
Պատասխանեց Ռահացոյցն .— «Ո՛վ դու, Արքայ,
- 1630 կը տեսնես ուր քո սիրտն ալ քեզ է վըկայ.  
Կա՛ց դու այս տեղ մինչ դեռածիլ խուճբը քաջ  
Մըղէ գընտակն իր ճոկանաւ քո առաջ»:  
Կանչեց յայնժամ ծառայ մի մօտ Արտաշիր,  
Ըսաւ.— «Գընա, զարկ, գընտակը մօտ ինձ դիր.
- 1635 Ասոնց մէջէն ով որ սլանայ գայ այս տեղ,  
Խըրի քաջաց մէջ իբր առիւծ մի ահեղ,  
Կորզէ տանի գընտակն իմ իսկ առջևէն,  
Չը քաշուելով մարդոցմէ որ այս տեղ են  
Նա՛ է անշուշտ նա՛ հարազատ իմ որդին
- 1640 Նա է ժառանգ Տան ու Տոհմին ու Ազգին:  
Շահի ծառան խոյացաւ այս հրամանով,  
Ջարկաւ գընտակն ու հեծելոց ձրգեց քով.  
Ինկան տըղաքն ետևէն, սուր նետի պէս,  
Երբոր եկան Արտաշիրին դէմ՝ ի տես,
- 1645 Մնացին այն տեղ քամուած, անչարժ անխըլիրտ:  
Թըռաւ յանկարծ Շահբուր առիւծ քաջասիրտ,  
Հօրն առջևէն խըլեց գընտակն ու տարաւ,  
Յանձնեց տըղոց, երբ հեռացաւ մի սակաւ:  
Խնդութենէն այնպէս զեղաւ սիրտ Շահին
- 1650 Որ ասէիր մանուկ դարձաւ ծեր մի հին:  
Վազեցին շուտ տըղան գետնէն առին վեր,

- Ձեռքէ ձեռք զայն թըռցուցին ասպաւորներ,  
Շահինչահ ինքն ապա զնա իւր գիրկն առաւ,  
Դատկերին\* փառք տըլաւ անվերջ՝ անզըրաւ.
- 1655 Գըլուխն՝ աչերն ու երեսը համբուրեց,  
Ըսաւ.— «Ծածկել տըղայ մ՞այսպէս մեղք է մեծ:  
Բընաւ երբէք չէր անցնէր այս իմ մըտքէս,  
Ձի մեռցուած կը կարծէի զանի ես,  
Աւելցուց Տէրն իմ Պետութեան շուքն ու փառք,
- 1660 Պարգևելով ինձ մի ժառանգ յայս աշխարհք.  
Չէ մարթ Մնոր վըճուին կալ դէմ հակառակ,  
Թէև գըլուխդ հասնի մինչև արեգակ:»  
Գանձէն ուզեց բազում գոհար ու դենար,  
Եւ ծանրագին ընտիր յակինթ որչափ կար:
- 1665 Ոսկի՝ գոհար, տըլին մանկան վերայ շաղ,  
Մուշկ ու ամբար լեցուցին շուրջն անյապաղ,  
Մինչև գազաթն ելաւ ոսկի և արծաթ,  
Այնպէս որ ա՛յլ չէր երևնար դէմքն ազատ:  
Դաստուրին ալ վըրան ոսկի տեղաց տեղ,
- 1670 Եւ ոսկեձոյլ գահուն վերայ արւին տեղ.  
Հարստութիւն ա՛յնչափ անոր տըլաւ շատ  
Որ տանը մէջ չը կար ա՛յլ տեղ մի ազատ:  
Հրաման ըրաւ որ գայ այնտեղ շուտափոյթ  
Արտաւանայ դուատըն ուրախ և անփոյթ.
- 1675 Ներեց անոր բոլոր մեղքերն ու յանցանք,  
Ջընջեց իսպառ լուսնի վրայէն բիծ ու ժանգ:  
Ուսուցիչներ բերին քաղքէն՝ այլ և այլ,  
Ով որ ունէր տաղանդ՝ համբաւ՝ փառք ու փայլ.

---

\* Մեծի Աստուծոյն Որմզդի որ և Դատկեր և Դատար (Դատարար) կը կոչուի:



- Ուսուցին մանկիկին պահլաւ գիր ու տառ,  
1680 Եւ կաց ու նիստ և շքնորհ խոսրովափառ,  
Եւ ի կըռուի վարել սանձ ու ըսսանակ,  
Եւ ձիու վրայ թըշնամւոյն ցոյց տալ նիզակ.  
Բաժակ քամել, պարգև բաշխել, խրախճանալ,  
Բանակ կազմել, ճակատ վարել, քաջանալ:  
1685 Թետոյ դրամոց փոխեց Շահ տիպն ու պատկեր,  
Մեծ ու պըզտիկ որչափ կային դենարներ,  
Մէկ կողմ անունն Արտաշիրի դրոշմեցին,  
Իսկ միւսն զգօն բարենըսեհ վէզիրին:  
Դաստուրին շատ բարձրացաւ վարկ ու անուն,  
1690 Այն որ արդէն ռահացոյցն էր ամենուն.  
Դըպրութեանց մէջ նորա անունն ալ դըրին,  
Անոր յանձնեց Շահ կընիքն ու մատանին:  
Մի հարուատ գանձ բաշխեց աղքատ տընանկաց  
Որոց պարէնն աշխատութեամբ էր ձեռաց:  
1695 Մի վայր տեսաւ խոպան՝ համակ խառաստան\*,  
Դաստակերտեց շինեց ուրախ մի ոստան:  
Շարուրակերտ\*\* կոչուեցաւ այն քաղաք նոր,  
Քանզի չիք այլ քաղաք անուամբս համազօր:

—)°(—

---

\* Փշաստան:

\*\* Կարնամակին մէջ (եր. 29) «Վաղար-Շարուր» կամ ըստ այլոց «Ոսս-Շահրուր» կը կարդանք այս քաղաքը զոր Տիր-դուսի «Ջունդի-Շարուր» կը կոչէ: Յայտնի է որ ջունդը սեւ-մական յորջորջում մ'է (բանակետդ) և հաւանական չէ որ Արտաշիրի օրով այսպիսի օտար անուանակոչութեան մը հարկըն զգացուած լինի: Սա՛ երևի, Տիրդուսին, իրեն յարմարեցուցածն է:

Արտաշիրին պատգամաւոր ողորկելը  
Հնդիկ Գետին\*, հարցնելո՞ւ համար թէ ի՞նչ  
պիտի լինի վախճանը իր թագաւորութեան  
և անկէ առա՞ծ պատասխանը

- 1700 Երբոր Շարուր դարձաւ նոճի բարձրաբերձ,  
Կը վախնային թէ չար աչաց երթայ մերձ.  
Չէր բաժանուեր Արտաշիրէն մի վայրկեան,  
Թէ՛ դաստուրն էր նորա և թէ օգնական:  
Կըռիւններէ պարապ չունէր Շահ բընաւ,  
Տեղ մը երկար չէր վայելեր հանգիստ լաւ.
- 1705 Հազիւ մի կողմ՝ թըշնամիէ կը մաքրէր,  
Մի այլն ուրիշ կողմէ գլուխ կ'առնէր վեր:  
Կ'ըսէր իմ այս է գաղտ ու յայտ սըրտի բաղձ  
Ամենակալ և բարեգութն առ Աստուած,  
Որ տայ ինձ ողջ աշխարհս առանց զովողի,
- 1710 Եւ ի պաշտօն պարապիմ լոկ Ստեղծողի:  
Ըսաւ յայնժամ անոր՝ դաստուրն բարեփառ.—  
«Մ՛վ լուսամիտ արքայ, հըզօր և արդար,  
Ուղարկենք շուտ մէկը Հընդիկ Գայտի մօտ,  
Որ շատ հըմուտ է, նեղելոց ալ գըթոտ:
- 1715 Գիտէ երկնից խորանի կարգն ու համար,  
Ուրախութեան դուռն ու վնասու ճանապարհ.  
Թէ եօթ բաժինք աշխարհի քեզ են վիճակ,  
Նա հըմայիւք կը գուշակէ քեզ շիտակ.  
Կ'ըսէ մի մի քեզ անձանձիր՝ աննախանձ,  
1720 Փոխարէն ալ չուզեր քեզմէ ոչ մի գանձ:»

\* Գէտ որ և Գայտ, կը նշանակէ գ ու շ ա կ՝ ի մ ա ս տ ու լ ն՝  
ա խ թ ա ր (Կարնամակ եր. 116, ծան. 127)

- Երբ այս լրսեց՝ ջոկեց արքայն Արտաշիր  
Մի պատանեակ ազնւատոհմ՝ ուշակիր,  
Տըւաւ ընծայ Հընդիկ Գէտին բազում ձի  
Եւ փող և նուրբ մետաքսեղէն Ճենացի,  
1725 Ըսաւ.— «Գընա, Գէտին ըսէ— ՄՎ այր դուն,  
Աստղաբարի՝ ճըչմարտախօս և արթուն,  
Դիտէ աստղերն ու ըսէ երբ կը լինէր  
Որ ես անկագ լինէի այս երկրի տէր,  
Թէ ոչ ի դուր կը տառապիմ կը յոգնիմ  
1730 Եւ կը վատնեմ զուր այս հարուստ գանձերն իմ:»  
Եկաւ Գէտի մօտ արքունի պատուիրակ,  
Դըրաւ առաջ ընծաները բովանդակ,  
Կըրկնեց բոլոր ըսածները Շահին, մինչ  
Չը մնալ մութ՝ չը պարզուած ոչ մի ինչ:  
1735 Հարցեր ուղղեց և տըխրեցաւ գիտնականն,  
Եւ գիտութեան դիմեց ընել մի դարման.  
Քաշեց սալլաբն\* ի զնին աստեղց և ի տես,  
Բերաւ նաև հընդկական զիչն\*\* ի հանդէս:  
Դիտեց ուշով Հաստատութեան կարգ ու դիրք,  
1740 Թէ երբ դուր է ու շահ, երբ վիշտ՝ վընաս՝ կիրք:  
Պատգամբերին ըսաւ.— «Ինչ որ ես տեսայ  
Թէ իրանի և թէ Շահին երթ ասա.  
Որ Անուզատ Մեհրակայ տոհմ ու ծընունդ  
Թէ խառնըւի քո արեան հետ ի սերունդ,  
1745 Կըրնաս հանգիստ վերայ բազմիլ քո գահուն,

---

\* Աստուղաբ ըսուած զննական մի գործիք՝ աստղագիտաց  
յատուկ:

\*\* Մի համարողական ցանկ կամ տախտակ ի պէտս տօմաւ  
բագիտաց կամ աստղահմայից:

- Պէտք չէ այլ ևս զօրք ուղարկես դու հեռուն,  
կ'աւելնայ գանձդ ու նեղութիւն չը մընար:  
Դու գնահ, ըսէ, տիրող քէնէն մի վախնար.  
Թէ աս կըրցաւ ընել՝ իրենն է իրան,  
1750 ինչ որ կամի՝ կը յաջողի անգուման:»  
Պատուիրակին տըաւ պարգև մի սակաւ,  
Բաւ.— «Գընա՛ պատմէ՛ ճըշդիւ գըտակաւ,  
Թէ չանսաստէ՛ կուտայ Երկինքը վերին  
ինչ որ իրեն գուշակեցի ի բարին:»  
1755 Եկաւ դեսպանն արքայի մօտ և պատմեց  
ինչ որ ըսած էր այն Գէտն համբաւամեծ:  
Երբոր լըսեց Արտաշիւր խօսքն այս որակ,  
Թախծեցաւ յոյժ, շըրջեցաւ գոյնն ի սպարակ,\*  
Բաւ.— «Երբէ՛ք, մի՛ լիցի որ իմ ազգէս  
1760 Մէկը Մեհրակ տոհմէն սերած տեսնեմ ես:  
Փողոցէն տուն, մի թըշնամի բերեմ որ  
Աչքը տընկէ երկրիս՝ ինչքիս իմ բոլոր.  
Ափսո՛ս յայնժամ դիզած իմ այն գանձերուս,  
Ճակատներուս, քաշած բոլոր վըշտերուս:  
1765 Մեհրակէն մի աղջիկ մընաց, կ'ըսեն, լոկ,  
Ջոր մինչև ցարդ չէ ալ տեսած բընաւ ոք.  
Հրամայեմ նորէն սաստիկ խիլ ու խոյզ  
Ռում ու Հինդ ու Չին ու Թարազ, ամէն կոյս.  
Ու երբ գըտնամ, ես այնպէս մը խորվեմ ան  
1770 Որ և հողն իսկ առնէ ողբ ու կոծ վըրան:»  
Շուտով Ջահրամ յղեց հեծեալ վաշտ շիտակ  
Քինախընդիր՝ խուզարկու մի Պետի տակ:  
Խոյզ ու խընդիր ըրաւ ամէն կողմը Շահ,

---

\* Ձերտէչօփ ըսուած ծառը որմէ դեղին ներկ կը չինուի:

- Զը մնաց երբէք ծեր ու մանուկ անակահի\*  
1775 Մեհրակայ երբ դստեր ականջն հասաւ այս,  
Դեհպետի տան մի խորշը թաքեաւ յաներկբայ\*\*.  
Ցորչափ կեցաւ այն տեղ անտես ու անգէտ,  
Պահպանեց զայն յարգ ու պատուով Դեհպետ:  
Մեծացաւ նա, եղաւ նոճի ուղղածիգ,  
1780 Խելք ու մրտքով նաև տեսլեամբ գեղեցիկ.  
Զը կար գիւղի մէջ զուգական նըմա մերձ,  
Ոչ ալ երկրին մէջ մի նոճի երկնաբերձ:**

—)•(—

**Թե ինչ անցաւ Շարոշի և Մեհրակայ դստեր  
միջև և թե ինչպէս Շարոշը զնա կիև առաւ**

- Երբոր անցաւ մի ժամանակ փոքրիկ այլ,  
Արտաշիրին ասողը նոր ևս առաւ փայլ:  
1785 Մի օր կանուխ որսի ելաւ Արտաշիր,  
Ուշիմ Շարուրն ալ հետ առաւ ի նախճիր\*\*\*  
Չիաւորներ դաշտի երես սըփոռեցան,  
Որոնելով երէ ի սփիւռ, ցիր ու ցան:  
Հեռուէն գիւղ մի երեցաւ ընդարձակ,  
1790 Այգի՛ պալատ՛ տուն ու տեղ ու հրապարակ.  
Քըչեց հասաւ հոն Շարուր, շատ մը չանցած,  
Դեհպետին տուն որ եկաւ, անդ իջաւ ցած:  
Շէնքի մէջ կար մի դարաստան հովասուն,**

---

\* Անտեղեակ:

\*\* Յապահովի:

\*\*\* Նախճիր՝ Պարսկերէնի մէջ սովորաբար որսի նշանակու  
թեամբ կը գործածուի:

- Մըտաւ այնտեղ պատանին արքայազուն,  
1795 Մի կոյս տեսաւ լուսնապատկեր որ ի խոր  
Ճախարակով դոյլ էր կախած ի ջրհոր:  
Գեղանին երբ տեսաւ Շարուն իր մօտիկ,  
Փութաց եկաւ ըսկըսաւ տալ դըրուատիք.—  
«Ուրախ լինիս, ուրախ զըւարթ դու մնաս,  
1800 Յամայր ամօք, անգէզ,\* անվիշտ անվընաս:  
Ծարաւ պէտք է լինին անշուշտ ձեր ձիան,  
Իսկ գիւղի մէջ աղի են ջուրք անպայման,  
Մինչ այս հորի մէջ քաղցր է ու սառնորակ,  
Թէ հրամայես հիմա քաշեմ ես արագ:»  
1805 Կ'ըսէ Շարուն.— «Ի՞նչ նեղութիւն կ'առնես դու  
Այսպէս խօսիլ, ո՞վ գեղանիդ լուսատու.  
Ունիմ ես մարդ իմ ըսպասու կը զօրեն  
Քաշել մեզ ջուր պէտքի չափ այս ջրհորէն:»  
Շըրջեց աղջիկն իւր գըլուխ և անց թափով,  
1810 Գընաց նըստաւ հեռուն ջուրի մը ափով:  
Հրաման ըրաւ Շահ ծառայից իւր միոյն.—  
«Տաշտ գընա բեր, ըսաւ, քաշէ՛ ջուր իսկոյն:»  
Լըսածին պէս վազեց ծառայն հեւրով.  
Դոյլ լարապիրկ մի կար և ճախր ի հողով,  
1815 Երբ իջաւ դոյլն ի հոր՝ լեցաւ զեփ զեղուն,  
Փըքուեցան այտք խեղճ ծառային նոյն պահուն,  
Չէր զօրեր դոյլն ուժով քաշել դուրս հորէն:  
Վազեց անտի Շարուր արքայն քաջօրէն,  
Ըսաւ,— «Ո՞վ դու, կընամարդի անպիտան,

---

\* Գէզ արմատէն որ կը նոյնանայ ընդ կիզ, կիծ, գիծ և այլ շատ մը բառերու հետ որ մի ընտանիք կը կազմեն և ամենուն ալ միութեան հասարակաց կապն է կճելու՝ կժելու՝ գժելու որով և ցաւ և վիշտ պատճառելու գաղափարը:

- 1820 Սա կընոջ չէր դոյլ ու ճախր ու այս պարան,  
Ուզածին չափ կը քաշէր այս հորէն ջուր,  
Մինչ դու ի նեղ ի տագնապ կաս յուսակտուր:»  
Եկաւ առաւ պարանը ձեռք Շահազատ,  
Բայց իրեն ալ գործը դժուար եկաւ շատ.
- 1825 Երբ յետոյ դոյլն առաւ, կըշռեց զայն տակաւ.  
Գովեց ոյժն այն կուսին և շատ զարմացաւ  
Որ քաշեց մեն մինակ այնքան ծանրութիւն,  
Իբրու թէ նա Քայեանց\* լինէր համարիւն:  
Երբ տեսաւ նէ որ Շարուր դոյլը հանեց,
- 1830 Մօա եկաւ, գով ներբող ասաց մեծամեծ.—  
«Կեցցես յաւերժ, գոչեց, անվերջ ժամանակ,  
Իմաստութիւն լիցի քեզ միշտ օժանդակ.  
Արտաշիրեան Շապհոյ\*\* շնորհիւ անպատճառ  
կը դառնայ այս հորին ջուրը կաթ պայծառ:»
- 1835 Մանուկն ըսաւ գովաբանին այս համեղ.—  
«Ի՞նչ գիտես թէ ես Շարուրն եմ, լուանագեղ:»  
Ըսաւ աղջիկն.— «Իմացած եմ շատ անգամ  
Գիտուններուն բերնէն ըստոյգ այս պատգամ  
Թէ Շարուրը քաջ է ուժով որպէս փիւլ,
- 1840 Շընորհաբաշխ՝ առատատուր, որպէս Նիւլ.  
Թէ իրանաւ նոճի, արոյր է մարմնով,

---

\* Յեղապետական երկրորդ Պայազատութենէն, այսինքն Ա-  
քեմեմենեանց կամ որ նոյն է Քայեանց սերունդէն:

\*\* Շարուրը կամ Շահբուրը մերայնոց քով Շապուհ կը տես-  
նենք և սխալ ալ չէ, գիտնալով ը-ի և հ-ի յաճախակի  
փոխանակութիւնները, ևս և, աւելի ճիշդ է պարսիկ բ-ին  
դիմացը մեր պ-ն տեսնել ըստ ընկալեալ հին սովորութեան:  
Այլ որովհետեւ այժմ այս հնչումները խաթարուած են, մենք  
ալ Եւրոպացւոց հետեւելով բ-ով գրել ընտրեցինք: Միայն  
հոս չափը կը պահանջէր որ խոտորէինք:

- Նըմանատիպն է Բահմանայ՝ համայնով:»  
Ըսաւ Շաբուրն.— «Ո՛վ իմ լուսնեակ գեղեցիկ,  
Հարցումներուս գու պատասխան տուր քաջիկ.  
1845 Յայտնէ՛ ինծի ի՞նչ սերունդէ տոհմէ ես,  
Քանզի Քայեան նիչ կը տեսնեմ քո երես:»  
Պատասխանեց.— «Դեհպետին եմ ես աղջիկ,  
Վասն որոյ և կունդ ու կայտառ, գեղեցիկ:»  
Շաբուրն ըսաւ.— «Մի՛ խօսիր, ո՛վ կոյս դու սուտ,  
1850 Քանզի չանցնիր արքայից քով սուտն ու փուտ:  
Շինականին չէ ունենալ մի դուխտ որ  
Աս բոյր ու գոյնն ունենայ ու այս շընորհ:»  
Ըսաւ աղջիկն.— «Արքայորդի՛դ Պայազատ,  
Եթէ չնորհես դու ինձ իմ կեանքս ազատ,  
1855 Ասեմ ուզորդ իմ ազգ ու տոհմը թէ ո՛վ,  
Թէ որ Շահէն անես ինծի ապահով:»  
Ըսաւ Շաբուր թէ «Մեր այգւոյն մէջ արդէն,  
Բարեկամաց դէմ չը բուսնիր ոխ ու քէն.  
Ըսէ՛, մի՛ հոգ տանիր ինէ, ոչ ալ բնաւ  
1860 Արդարասէր Շահինշահէն մեծհամբաւ:»  
Աղջիկն ըսաւ.— «Կուզես շիտակն ըսեմ քեզ,  
Անուշազադ Մեհրակայ դուստրն եմ ես.  
Բարեպաշտ ոմն առաւ բերաւ զիս այս տեղ.  
Եւ յանձնեց այս գիւղապետին հանճարեղ:  
1865 Ես երկիւղէն այն մեծազօր Արքային՝  
Ջըրկիր եղայ և աղախին ըստորին:»  
Մըտաւ Շաբուր, աչքէ անցուց այն տեղեր.  
Դեհպետն եկաւ, բարև կեցաւ, կ'ըսպասէր:—  
«Տուր ինձ, ըսաւ, դու ինձ այս կոյս գեղանի,  
1870 իմ կողմանէս երկինք վըկայ քեզ լինի:»  
Տըլաւ Դեհպետն ըստ խընդրանաց՝ կոյսն անոր,



կատարելով հըրոյ պաշտմունքն ի բոլոր:

—)°(—

Շարձարի որդոյն, Որմզդի ճնռնդր  
Մեհրակայ դատրեն

- Շատ ժամանակ չանցած նոճին ուղղահարթ,  
Արգասաբեր, փըթթեւ եկաւ որպէս վարդ.  
1875 Երբ ինն ամիս այն Մահիկէն ելաւ յանգ,  
Մի մանչ ծընաւ հօրը տիպն ու կերպարանք:  
Կ'ըսէիր ետ դարձաւ յաշխարհ Սպանդիար  
Կամ Արտաշիր ինք մեծանուն ասպավար.  
Որմիզդ անուն տըւաւ անոր Արտաշիր,  
1880 Քանզի նոճի էր նա թըփոց մէջ ի սփիւռ:  
Եօթ տարիներ այսպէս անցաւ ճիշտ վըրան.  
Աշխարհի մէջ չունէր Որմիզդ իւր նըման,  
Աչքերէ միշտ կը պահէին զայն հեռու,  
Չէին թող տար որ երթայ նա խաղերու:  
1885 Որսի գընաց եօթ օրի չափ Արտաշիր,  
Հեծաւ Շարուրն ալ միասին ի նախճիր.  
Պալատէն դուրս թըռաւ Որմիզդ յայնժամ գաղտ,  
Ջի դասերէն ըսկըսած էր ըզգալ տաղտ.  
Վազեց շիտակ Շահին եղած տեղն ու կէտ,  
1890 Մէկ ձեռքն աղեղ՝ միւսը բըռնած երկու նետ:  
Մի քանի Կնկեր ճոկան ու գունտ հետն առած,  
Դիմեց Շահին մօտը փոքրիկ գուպարած:  
Արքայն իսկ իւր ըսպայիւք նոյն ժամանակ,  
Նախճիրէն ետ դարձած էր այն հրապարակ:  
1895 Մովպետան մովպետի հետ զոյգ միասին,

- Հրապարակի մօտերը երբոր հասին,  
Ջարկաւ տըղոց մին թըռուց գունտը հեռուն  
Որ գիւլ եկաւ մինչև Շահին ոտներուն:  
Ոչ ոք իշխեց գընալ գունտի ետևէն,  
1900 կացին անշարժ, չեղաւ ոչ ոք իւր տեղէն.  
Որմիզդ միայն, ընկերներուն մէջէն՝ քաջ,  
Հողմի պէս թռաւ, կանգնեց Շահին ընդ առաջ,  
Վերցուց շուտով գունտն առջևէն իւր պապուն.  
Լաշկարի մէջ գնաց մի խոր շրշընջիւն,  
1905 Ապա մի ձայն բարձրացուց\* այնչափ ուժգին  
Որ ապշեցաւ մեծազօր Շահն ալ ինքնին:  
— «Ի՛մ է ճոկան, ի՛մ արութիւն, ի՛մ հանդէս,  
Ի՛մ՝ մարտակցաց հետ քաջութեան ասպարէս:»  
Դարձաւ յայնժամ ըսաւ Արքայն Մովպետին.—  
1910 «Տե՛ս ո՞յր ծընունդն է այս ազնիւ դեռատին:»  
Հարցուց մովպետն. ոչ ոք գիտէր ո՛չ մի բան,  
կային բոլորն ալ լուռ ևեթ միաբան:  
Ըսաւ արքայն Մովպետին.— «Ել գընա հոտ.  
Գետնէն վե՛ր առ այդ տըղան՝ շուտ բեր ինձ մօտ:»  
1915 Գընաց մովպետն, առաւ փոշեաց մէջէն վեր,  
Բերաւ մանկիկն ինքնակալին կողն ի վեր:  
Ըսաւ արքայն.— «Ո՛վ դու մանուկ գերազնիւ,  
Ո՛ր տոհմէն քեզ պէտք է դընել ի հաշիւ:»  
Աս որ լըսեց, ձայնեց տըղան բարձրագոյ.—  
1920 «Չէ պարտ ծածկել իմ անուն ու ազգակոյ.  
Քո իսկ որդւոյդ, Շարուրի, եմ ես զաւակ,  
Մօր կողմանէ Մեհրակայ եմ սերունակ:»  
Ապշեցաւ Շահն ու կաց մընաց ի վարան,

---

\* Որմիզդ:

- Ժրպտեցաւ ու ըսկըսաւ խորհիլ վըրան.*
- 1925 *Հրաման ըրաւ բերին Շաբուրն հրապարակ,  
Փուրսիչ ըրաւ անկէ Շահ երկար բարակ:  
Ահը պատեց սիրտը Շապհոյ վեհազին,  
Խոռվութենէն երեսն եղաւ դեփ դեղին,  
Ծիծաղելով յետոյ ըսաւ Արտաշիր.—*
- 1930 *«Ո՛րդի, շիտա՛կն ասա՛, երբէք մի քաշուիր,  
Ջաւակ պէտք է, փոյթ չէ թէ ո՛վ և ուստի,  
Սորա մասին կ'ըսեն թ'է արքայորդի:»  
Շաբուրն ըսաւ.— «Ա՛րքայ յաւերժ դու կեցցես,  
Իցի՛ւ աշխարհ տեսնէ իշխան քեզի պէս.*
- 1935 *Իմ է այո՛, տըղեկն, Որմիզդ նորա Կոնն  
Որ մի կակաչ փայլէ ի մէջ խոտերուն.  
Ծածկեցի ես պահ մի զայն Շահրիարէն,  
Մինչև աճի պըտղաբերէ ինքն իրեն:  
Մեհրակայ դուատրէն ծընած է այդ վեհազն,*
- 1940 *Իմ արիւնն է զուտ ու զուտ, իմ ազգ և ազն:»  
Պատմեց ջուրին՝ ջըրհորին անցքերն ի լուր,  
Հայրը մինչդեռ մըտիկ կ'ընէր լուռ ու լուռ:  
Ուրախ եղաւ լըսածներէն Արտաշիր,  
Սըրահն անցաւ, առնելով հետն ըզ վէզիր:*
- 1945 *Գըրկելով և սիրուն փոքրիկ տղան Շահ,  
Սրահէն ապա ուղղուեցաւ դէպի գահ:  
Հոն մի ոսկի գահիկ դըրին մանկիկին,  
Ոսկի մանեակ և մի ոսկի խոյր բերին,  
Մանկան գըլուխն յարդարեցին պերճաբար:*
- 1950 *Յետոյ գանձէն բերին ոսկի և գոհար,  
Թափեցին շուրջ մինչև հասաւ գըլուխն ի վեր,  
Մէջէն քաշեց հանեց մարմինն Արտաշիր:  
Ոսկին գոհարն աղքատաց տուաւ Շահ բաժին,*

- իսկ անոնցմէ գերապատիկ՝ Թոռնիկին:
- 1955 Դիպակներով կահազարդեց զատրուշան,  
Նովրուզի սրահն և Սադայ հանդիսարան.  
Աւագանւոյն տըւաւ խընջոյք մի շքեղ,  
Նըւագածուք երամովին կալան տեղ:  
Այսպէս ըսաւ Շահ իշխանաց քաղաքին
- 1960 Որոց անմասն ի հանճարոյ չէր հոգին.—  
«Աստղահամար գուշակներու խօսքերէն  
Խոտոր իյնալ ու դուրս ելլել չէ օրէն.  
Արդէն ըսած էր ինձ հընդիկ Գէտը լաւ  
Թէ մի յուսար բարիք բախտէ դու բընաւ.
- 1965 Ոչ գահ ու Թագ, ոչ զօր ու գանձ, ոչ աշխարհք,  
Ոչ վեհափառ պերճութիւն, ոչ շուք ու փառք,  
Մինչև որ տոհմն Անուշադին Մեհրակի  
Քո արեան հետ չի խառնըւի ուղղակի:  
Ահա անկէց ի վեր տարի ութ անցաւ,
- 1970 Չը բերին մեզ շարժմունք երկնից չար բընաւ:  
Յորմէ հետէ գըտաւ Որմիզդ իւր հանգիստ,  
Ամէն ինչ ըստ կամաց՝ ըղձից՝ գընաց միշտ.  
Եօթն աշխարհի տիրեցի ես քաջայաղթ,  
Ինչ որ իմ սիրտ ցանկացաւ՝ ինձ տըւաւ բաղդ.»
- 1975 — Ապա բոլոր աւագանին բարձրագահ  
Իրանայ զայն հըռչակեցին Շահինչահ:

## ՎԵՐՋ

**ՎՐԻՊԱԿՔ**

<b>Էջ</b>	<b>Տող</b>	<b>Համար</b>	<b>Սխալ</b>	<b>Ուղիղ</b>
IV	12	. . . . .	<b>թէ՛</b>	<b>թէ՛</b>
”	30	. . . . .	<b>որով</b>	<b>որով</b>
VI	1	. . . . .	<b>բանատեղծը</b>	<b>բանաստեղծը</b>
VII	14	. . . . .	<b>գեհկաններու,</b>	<b>գեհկաններու մօտ,</b>
IX	2	. . . . .	<b>թագաւորը</b>	<b>թագաւորը</b>
X	9	. . . . .	<b>աւազ</b>	<b>աւազ</b>
”	12	. . . . .	<b>դիակը</b>	<b>դիակը</b>
3	.	68	<b>վընաս մը չի տաս</b>	<b>չը տաս ինչ վընաս</b>
6	.	131	<b>Առ</b>	<b>Ա՛ռ</b>
9	.	191	<b>ոյր</b>	<b>ոյր</b>
10	.	240	<b>240</b>	<b>235</b>
”	.	245	<b>245</b>	<b>240</b>
			<b>ըստ կարգի մինչև</b>	<b>560՝</b>
20	.	498	<b>(որոնէ՛)</b>	<b>որոնէ՛</b>
”	.	2	<b>վարէն</b>	<b>Աքեմենեան</b>
23	.	4	<b>վարէն</b>	<b>կը կատարուէր</b>
26	.	634	<b>գետինը</b>	<b>գետինը</b>
”	.	635	<b>ան</b>	<b>այն</b>
31	<b>առաջին վարէն</b>		<b>Արշակունեօք</b>	<b>Արշակունեօք</b>
32	.	762	<b>զի</b>	<b>Ձի</b>
38	.	923	<b>հրնարագէտ</b>	<b>հրնարագէտ</b>
45	.	1095	<b>ի կուլ</b>	<b>ի կուր</b>
”	.	1116	<b>զօրապետներ</b>	<b>զօրապետներ</b>
52	.	1317	<b>գոգաւոր</b>	<b>գոգաւոր</b>
54	.	1367	<b>;</b>	<b>,</b>
56	.	1390	<b>խըտրելով</b>	<b>խըտրելով</b>

Էջ	Տող	Համար	Սխալ	Ուղիղ
63	.	1570	. Ո՛վ . .	Ո՛վ
64	.	1597	. ողջ է միասին	. ողջ է ու միասին
66	.	1670	. աըւին . .	. տըւին
69	.	1729	. ի զուր . .	. ի զուր
71	.	1776	. խորչը . .	. խորչ
72	.	1794	. այնտեղ . .	. այնտեղ
”	.	1805	. նեղութիւն . .	. նեղութիւն
”	.	1807	. ըսպասու կը	. ըսպասու, կը
”	.	1810	. մը . . .	. մի
74	.	1846	. երես . .	. յերես
75	.	1880	. ի սփիւռ	. ի սփիւռ
77	.	1950	. Յետոյ . .	. Յետոյ











Digitized by Google



Original from  
COLUMBIA UNIVERSITY

13167154  
COLUMBIA UNIVERSITY LIBRARIES



\*0113167154\*

